

ԱՆԿԱԽ ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ (ԱՅՄ)

# ՀԱՅԱՍՏԱՆ. ԱՄՓՈՓԻՉ ԶԵԿՈՒՅՑ 2014–2016

Արտակ Բյուրումյան  
Անկախ հետազոտող  
Երկրորդ ամփոփիչ զեկույց  
Second End-of-Term Report

Open  
Government  
Partnership

INDEPENDENT  
REPORTING MECHANISM

# INDEPENDENT REPORTING MECHANISM (IRM): ARMENIA END-OF-TERM REPORT 2014-2016

**Armenia has made progress in increasing public access to information, particularly in extractive industries and government decision making at sub-national level. While positive developments were noted, commitments did not lead to major changes in opening government.**

The Open Government Partnership (OGP) is a voluntary international initiative that aims to secure commitments from governments to their citizenry to promote transparency, empower citizens, fight corruption, and harness new technologies to strengthen governance. The Independent Reporting Mechanism (IRM) carries out a review of the activities of each OGP-participating country. This report summarizes results of the period from July 2014 to December 2016, considering that Armenia's OGP action plan included commitments with completion due in December 2016.

The Staff of the Government acts as the Secretariat for OGP in Armenia. The OGP working group, a multi-stakeholder dialogue on OGP, was established by the Prime Minister's decree from 15 July 2014. The working group consists of 24 members, of which 16 represent the Government and 8 represent the Civil Society Organization (CSO) community.

In October 2016, Armenian government published the end of term self-assessment report of its 2014-2016 action plan<sup>1</sup>.

At the time of writing this report, the Government of Armenia published draft of the Armenian third action plan<sup>2</sup> containing eight new commitments. Most of the commitments from second action plan have not been carried over into the third action plan. Within the framework of OGP, the Government decided to continue implementation of one commitment on improving the transparency of asset and income declarations of high ranking officials. Other commitments of the second action plan do not have direct relationship with the third action plan.

## TABLE 1: AT A GLANCE

NUMBER OF COMMITMENTS: 11

### LEVEL OF COMPLETION

	MIDTERM	END-OF-TERM
COMPLETED:	3	6
SUBSTANTIAL:	1	4
LIMITED:	6	1
NOT STARTED:	1	0

### NUMBER OF COMMITMENTS WITH:

CLEAR RELEVANCE TO OGP VALUES:	10	10
TRANSFORMATIVE POTENTIAL IMPACT:	3	3
SUBSTANTIAL OR COMPLETE IMPLEMENTATION:	4	9
<b>ALL THREE (🔄):</b>	0	0

### DID IT OPEN GOVERNMENT?

MAJOR:	N/A	0
OUTSTANDING:	N/A	0

### MOVING FORWARD

COMMITMENTS CARRIED OVER TO NEXT ACTION PLAN:	1
---	---

## CONSULTATION WITH CIVIL SOCIETY DURING IMPLEMENTATION

Countries participating in OGP follow a process for consultation during development and implementation of their OGP action plan. Consultations during implementation process were held at Government's premises, within the format of OGP working group.

During the period covered by the OGP IRM progress report, the OGP working group held a meeting on 15 February 2016<sup>3</sup> to discuss: implementation of the second action plan, and the development of the third action plan. Additionally, the OGP working group held an expanded meeting on 5 October 2015<sup>4</sup> to discuss (1) the implementation of the second action plan, (2) the self-assessment report, and (3) the monitoring report prepared by the Freedom of Information Center of Armenia CSO (FOICA). In some instances, CSO representatives in OGP working group monitored progress on implementation of their proposed commitments, which were also included in the second action plan. Whereas, in other cases, CSOs representatives in the OGP working group lacked the expertise on issues covered by Government's proposed commitments. For instance, none of the representative CSOs were allocated with monitoring the implementation of commitment on public awareness of health care financing, and on community micro-surveys. Other CSOs working on health and community development issues were neither aware of OGP commitments, nor able to monitor their implementation.

During implementation meetings, the Government invited the working group CSOs to participate. While only working groups members are officially invited the meetings were open. In the earlier meetings of the OGP working group, Government representatives refrained from giving floor to CSOs, instead using the meeting as a platform for highlighting the work regarding implementation of commitments. However, the Government representatives modified this approach later and employed their meetings with the OGP working group to listen to the CSO representatives. Moreover, the Government engaged in consulting with CSOs on implementation of commitments and processes thereof.

**Table 2: Action Plan Consultation Process**

PHASE OF ACTION PLAN	OGP PROCESS REQUIREMENT (ARTICLES OF GOVERNANCE SECTION)	DID THE GOVERNMENT MEET THIS REQUIREMENT?
During Implementation	Regular forum for consultation during implementation?	YES
	Consultations: Open or Invitation-only?	Invitation-only
	Consultations on IAP2 spectrum	Consult

## PROGRESS IN COMMITMENT IMPLEMENTATION

All of the indicators and method used in the IRM research can be found in the IRM Procedures Manual, available at <http://www.opengovpartnership.org/about/about-irm>. One measure deserves further explanation, due to its particular interest for readers and usefulness for encouraging a race to the top between OGP-participating countries: the "starred commitment" (★). Starred commitments are considered exemplary OGP commitments. In order to receive a star, a commitment must meet several criteria:

1. It must be specific enough that a judgment can be made about its potential impact. Starred commitments will have "medium" or "high" specificity.
2. The commitment's language should make clear its relevance to opening government. Specifically, it must relate to at least one of the OGP values of Access to Information, Civic Participation, or Public Accountability.
3. The commitment would have a "transformative" potential impact if completely implemented.
4. Finally, the commitment must see significant progress during the action plan implementation period, receiving a ranking of "substantial" or "complete" implementation.

Based on these criteria, Armenian action plan neither contained starred commitments at the midterm report, nor at the end of term.

Commitments assessed as star commitments in the midterm report can lose their starred status if at the end of the action plan implementation cycle, their completion falls short of substantial or full completion, which would mean they have an overall limited completion at the end of term, per commitment language.

Finally, the graphs in this section present an excerpt of the wealth of data the IRM collects during its progress reporting process. For the full dataset for Armenia, see the OGP Explorer at [www.opengovpartnership.org/explorer](http://www.opengovpartnership.org/explorer).

## ABOUT "DID IT OPEN GOVERNMENT?"

Often, OGP commitments are vaguely worded or not clearly related to opening government, but they actually achieve significant political reforms. Other times, commitments with significant progress may appear relevant and ambitious, but fail to open government. In an attempt to capture these subtleties and, more importantly, actual changes in government practice, the IRM introduced a new variable 'did it open government?' in End-of-Term Reports. This variable attempts to move beyond measuring outputs and deliverables to looking at how the government practice has changed as a result of the commitment's implementation. This can be contrasted to the IRM's "Starred commitments" which describe *potential* impact.

IRM Researchers assess the "Did it open government?" with regard to each of the OGP values that this commitment is relevant to. It asks, did it stretch the government practice beyond business as usual? The scale for assessment is as follows:

- **Worsened:** worsens government openness as a result of the measures taken by commitment.
- **Did not change:** did not change status quo of government practice.
- **Marginal:** some change, but minor in terms of its impact over level of openness.
- **Major:** a step forward for government openness in the relevant policy area, but remains limited in scope or scale
- **Outstanding:** a reform that has transformed 'business as usual' in the relevant policy area by opening government.

To assess this variable, researchers establish the status quo at the outset of the action plan. They then assess outcomes as *implemented* for changes in government openness.

Readers should keep in mind limitations. IRM End-of-Term Reports are prepared only a few months after the



implementation cycle is completed. The variable focus on outcomes that can be observed on government openness practices at the end of the two-year implementation period. The report and the variable do not intend to assess impact because of the complex methodological implications and the time frame of the report.

## GENERAL OVERVIEW OF COMMITMENTS

As part of OGP, countries are required to make commitments in a two-year action plan. End of term reports assess an additional metric – ‘did it open government?’ The tables below summarize the completion level at the end of term and progress on this metric. For commitments that were already complete at the midterm, only an analysis of ‘Did it open government?’ is provided. For additional information on previously completed commitments, please see the Armenia IRM midterm progress report<sup>5</sup>.

Armenia’s second action plan contained commitments related to mining industry (commitments 1 and 2), health and education management and financing (commitments 3 and 9), transparency of asset and income declarations of high ranking officials (commitments 4), public procurements (commitment 5), community management (commitments 6 and 11), public participation in policy development (commitments 7 and 8), and training of public servants on freedom of information and corruption (commitment 10).

For the above-mentioned commitments, there are no independent reports assessing the impact of implementation in respective areas. The Government and the CSO community may need to put more efforts into monitoring successful implementation of these commitments and communicate the impact or early results.

If successfully implemented, commitments on mining can substantially open the government on the said issue. The Government did not complete implementation of commitment 11, which was due in April 2016, for online broadcasting of sessions of Community Councils.

With support from FOICA, the government initiated a public awareness campaign on TV. However, there is substantial room for improvement of communication with the Armenian society as CSOs have highlighted Armenian civil society’s lack of awareness on OGP as well as Armenian participation in OGP.

The draft of the third action plan was published on [www.ogp.am](http://www.ogp.am) website on 18 July 2016 and approved by the Government on 11 August 2016. The action plan includes eight commitments related to following:

1. improving regulation of business trips of executive officials;
2. improving regulation of awarding grants from the state budget;
3. improving the transparency of the budget;
4. improving the electronic system of presentations of declaration of assets and income of high level officials and persons affiliated with them;
5. creating an electronic portal of decisions of local authorities; (6)
6. creation of a single electronic ledger of bodies awarding licenses and notifications;
7. improving public awareness on social services and their accessibilities; and
8. implementation of pilot “one-stop-shop” project in military recruitment centers.

<sup>1</sup>For government self-assessment report see: [https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia\\_2014-2016\\_Self-Assessment\\_ENG.pdf](https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia_2014-2016_Self-Assessment_ENG.pdf)

<sup>2</sup>For the third action plan see: [https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia\\_NAP3\\_2016-18.pdf](https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia_NAP3_2016-18.pdf)

<sup>3</sup>“Meeting of the OGP Working Group”, OGP.am, February 15, 2016, <http://bit.ly/2sbIPTP>.

<sup>4</sup>“OGP Working Group Meeting was Held”, OGP.am, October 7, 2015, <http://bit.ly/2sbNTGR>.

<sup>5</sup>See: [https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia\\_IRM14-15\\_EN\\_0.pdf](https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia_IRM14-15_EN_0.pdf).

**Table 3: Overview: Assessment of Progress by Commitment**

COMMITMENT OVERVIEW	SPECIFICITY				OGP VALUE RELEVANCE (as written)				POTENTIAL IMPACT				COMPLETION		MIDTERM		DID IT OPEN GOVERNMENT?					
	None	Low	Medium	High	Access to Information	Civic participation	Public Accountability	Technology & Innovation for Transparency & Accountability	None	Minor	Moderate	Transformative	Not started	Limited	Substantial	Complete	Worsened	Did not change	Marginal	Major	Outstanding	
1. Digitization and publication of data collected by the “Republican Geological Fund”			X		X		X				X		X									
															X					X		
2. Ensure transparency in mining			X		X	X					X			X						X		
															X							
3. Public awareness of health care financing			X		X		X			X				X						X		
																X						
4. Asset and income declarations of high-ranking officials			X		X					X						X				X		
																	X					
5. Broadcasting State Procurement Appeals Board sessions							X			X						X						
			X		X		X			X										X		
6. Community micro-surveys			X			X	X			X				X							X	
																X						
7. State policies and legislative reforms			X		X					X					X						X	

COMMITMENT OVERVIEW	SPECIFICITY				OGP VALUE RELEVANCE (as written)				POTENTIAL IMPACT				COMPLETION		MIDTERM END-OF-TERM		DID IT OPEN GOVERNMENT?					
	None	Low	Medium	High	Access to Information	Civic participation	Public Accountability	Technology & Innovation for Transparency & Accountability	None	Minor	Moderate	Transformative	Not started	Limited	Substantial	Complete	Worsened	Did not change	Marginal	Major	Outstanding	
8. Public awareness on the law-making activity of state governance bodies			X		X					X				X				X				
9. Transparency of secondary education institutions' Governing Boards elections and annual budget planning			X			X	X			X						X			X			
10. Freedom of information and anti-corruption training			X		Unclear					X				X				X				
11. Transparency of local self-government bodies			X		X									X				X				

# ԱՆԿԱՆ ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ (ԱՅՄ) ՀԱՅԱՍՏԱՆ. 2014-2016 ԱՄՓՈՓՈՉ ԶԵԿՈՒՅՑ

**Հայաստանն առաջընթաց է արձանագրել հանրության համար տեղեկատվության մատչելիության հարցում, մասնավորապես՝ արդյունահանող ձյուղերի և տեղական մակարդակով կառավարման մարմինների որոշումների կայացման ոլորտներում: Չնայած դրական զարգացումներին՝ այս հանձնառությունները զգալի տեղաշարժ չեն փերել բաց կառավարման կայացման առումով:**

Բաց կառավարման գործընկերությունը (այսուհետ՝ ԲԿԳ) կամավոր միջազգային նախաձեռնություն է, որի նպատակն է նախաձեռնությանը միացած երկրների կառավարությունների կողմից հանձնառությունների ստանձնումը՝ թափանցիկության խթանման, հանրային մասնակցության ապահովման, կոռուպցիայի դեմ պայքարի և կառավարումը բարելավելու նպատակով նոր տեխնոլոգիաների օգտագործման ուղղությամբ: Անկախ հաշվետվական մեխանիզմը (ԱՅՄ) գնահատում է ԲԿԳ մասնակից յուրաքանչյուր երկրի գործունեությունը: Այս զեկույցն ամփոփում է 2014 թ. հուլիսից մինչև 2016 թ. դեկտեմբեր ընկած ժամանակահատվածի արդյունքները՝ հաշվի առնելով, որ Հայաստանի ԲԿԳ գործողությունների ծրագիրը ներառում էր հանձնառություններ, որոնց ավարտը նախատեսված էր 2016 թ. դեկտեմբերին:

Հայաստանում ԲԿԳ քարտուղարության դերը ստանձնել է ՀՀ կառավարության աշխատակազմը: Վարչապետի՝ 2014 թ. հուլիսի 15-ի հրամանով ստեղծվել է տարբեր շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներից բաղկացած ԲԿԳ աշխատանքային խումբ: Այն կազմված է 24 անդամից, որոնցից 16-ը կառավարության, իսկ 8-ը՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) ներկայացուցիչներ են:

2016 թ. հոկտեմբերին Հայաստանի կառավարությունը հրապարակեց 2014-2016 թթ. գործողությունների ծրագրի ինքնագնահատման ամփոփիչ զեկույցը<sup>1</sup>:

Սույն զեկույցի մշակման ընթացքում Հայաստանի կառավարությունը հրապարակեց Հայաստանի գործողությունների երրորդ ծրագրի նախագիծը<sup>2</sup>, որը ներառում է ութ նոր հանձնառություն: Գործողությունների երկրորդ ծրագրով ստանձնած հանձնառությունների մեծ մասը չի ընդգրկվել գործողությունների երրորդ ծրագրում: Կառավարությունը ԲԿԳ-ի շրջանակներում որոշեց շարունակել բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման թափանցիկության բարելավման հանձնառության իրականացումը: Գործողությունների երկրորդ ծրագրի մյուս հանձնառություններն անմիջական կապ չունեն գործողությունների երրորդ ծրագրի հետ:

### ԱՂՅՈՒՍԱԿ 1. ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՆԱԿ: 11  
ԿԱՏԱՐՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ (ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ)

	ՄԻՋԱՄՏԱՄԱՍԿԵՏ	ՎԵՐՁԱՄՏԱՄԱՍԿԵՏ
ԱՄԲՈՒՂՈՒԹՅԱՄԲ՝	3	6
ԶԳԱԼԻ՝	1	4
ՈՐՈՇԱԿԻ՝	6	1
ՉՍԿՍՎԱԾ՝	1	0

### ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՍՏԱԿ ԿԱՊՎԱԾ ԲԿԳ ԱՐԺԵՆԵՐԻ ՀԵՏ՝	10	10
ՉԱՓԱՎՈՐ ԿԱՍ ՓՈԽԱԿԵՐՊՈՐ ՊՈՏԵՆՑԻԱԼ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՄԲ՝	3	3
ԶԳԱԼԻ ՉԱՓՈՎ ԿԱՍ ԱՄԲՈՒՂՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ	4	9
ԵՐԵԶ ՄԻԱՍԻՆ (☺)՝	0	0

### ԲԵՐԵՆ Է ԲԱՅ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

ԶԳԱԼԻ՝	N/A	0
ԱՎՆԱՌՈՒ՝	N/A	0

### ՀԵՏԱԳԱ ԶԱՅԼԵՐ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՋՈՐԴ ԾՐԱԳԻՐ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ՝		1
---	--	---

## ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Մասնակից երկրները ԲԿԳ-ի գործողությունների իրենց ծրագրի մշակման և իրականացման ընթացքում պետք է մի շարք խորհրդակցություններ կազմակերպեն: Իրականացման փուլում կառավարության շենքում մի շարք խորհրդակցություններ են կազմակերպվել ԲԿԳ աշխատանքային խմբի հանդիպումների ձևաչափով:

ԱՅՄ-ի ԲԿԳ միջանկյալ զեկույցում ներառված ժամանակահատվածի ընթացքում ԲԿԳ աշխատանքային խումբն ընդլայնված հանդիպում է ունեցել 2016 թ. փետրվարի 15-ին<sup>3</sup>՝ քննարկելու գործողությունների երկրորդ ծրագրի իրականացումը և գործողությունների երրորդ ծրագրի մշակումը: Բացի այդ, ԲԿԳ աշխատանքային խումբն ընդլայնված հանդիպում է ունեցել 2015 թ. հոկտեմբերի 5-ին<sup>4</sup>՝ քննարկելու (1) գործողությունների երկրորդ ծրագրի իրականացումը, (2) ինքնազնադատման զեկույցը և (3) Հայաստանի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» (ԻԱԿ) ՀԿ պատրաստած մոնիտորինգի զեկույցը: Որոշ դեպքերում ԲԿԳ աշխատանքային խմբի ԶՀԿ ներկայացուցիչները մշտադիտարկել են իրենց կողմից առաջարկված այն հանձնառությունների կատարման առաջընթացը, որոնք ներառված էին գործողությունների երկրորդ ծրագրում: Սակայն մյուս դեպքերում ԲԿԳ աշխատանքային խմբում ընդգրկված ԶՀԿ ներկայացուցիչները բավարար փորձագիտություն չունեին կառավարության կողմից առաջադրված հանձնառությունների ոլորտում: Օրինակ, ԶՀԿ ներկայացուցիչներից ոչ մեկը չի ստանձնել առողջապահության ֆինանսավորման հանրային իրազեկման և համայնքային միկրոհետազոտությունների կատարման վերաբերյալ մշտադիտարկման իրականացումը: Առողջապահության և համայնքային զարգացման ոլորտում աշխատող այլ ԶՀԿ-ներ տեղյակ չեն եղել ԲԿԳ հանձնառությունների մասին և չեն կարողացել հետևել դրանց իրականացմանը:

Իրականացման գործընթացի շրջանակներում կազմակերպվող հանդիպումներին կառավարությունը հրավիրում էր ԲԿԳ աշխատանքային խմբի մասնակից ԶՀԿ-ներին: Չնայած պաշտոնական հրավիրներն ուղարկվել են միայն աշխատանքային խմբի անդամները, այնուամենայնիվ հանդիպումները բաց են եղել: Աշխատանքային խմբի նախորդ հանդիպումների ժամանակ կառավարության ներկայացուցիչները խուսափում էին ԶՀԿ-ներին խոսք տալ՝ փոխարենը հանդիպումն օգտագործելով որպես հանձնառությունների կատարման աշխատանքների լուսաբանման հարթակ: Սակայն հետագայում կառավարության ներկայացուցիչները փոխեցին այդ մոտեցումը և սկսեցին ԲԿԳ աշխատանքային խմբի հետ իրենց հանդիպումներն օգտագործել ԶՀԿ ներկայացուցիչներին լսելու համար: Ավելին, կառավարությունը սկսեց խորհրդակցել ԶՀԿ-ների հետ հանձնառությունների իրականացման և դրանցից բխող գործընթացների հարցերով:

### Աղյուսակ 2: Գործողությունների ծրագրի խորհրդակցական գործընթաց

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՓՈՒԼԸ	ԲԿԳ ԳՈՐԾՆԹԱՑԻ ՊԱՅԱՆՋՆԵՐ (ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՀՈՂՎԱԾՆԵՐ)	ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՎԱՐԱՐԵԼ Է ՏԿՅԱԼ ՊԱՅԱՆՋԸ
Իրականացման գործընթաց	Իրականացման ընթացքում խորհրդակցության կանոնավոր հարթակ եղել է	ԱՅՈ
	Խորհրդակցությունները բաց էին, թե՛ հրավերով	Հրավերով
	Խորհրդակցության մակարդակը ըստ Հանրային մասնակցության միջազգային ակադեմիայի (IAP2) սպեկտրի	Խորհրդակցու

## ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ

ԱՅՄ հետազոտության մեջ օգտագործված բոլոր ցուցանիշներն ու մեթոդները կարելի է գտնել ԱՅՄ ընթացակարգերի ձեռնարկում (<http://www.opengovpartnership.org/about/about-irm>): Չափանիշներից մեկը լրացուցիչ բացատրության կարիք ունի, քանի որ այն առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում ընթերցողների համար և խթանում է մրցակցությունը ԲԿԳ մասնակից երկրների միջև: Դա այսպես կոչված «աստղանշված հանձնառությունն» է (🌟): Աստղանշված հանձնառությունները համարվում են ԲԿԳ օրինակելի հանձնառություններ: Աստղ ստանալու համար հանձնառությունը պետք է համապատասխանի մի շարք չափանիշների

1. Այն պետք է բավականաչափ կոնկրետ լինի, որպեսզի հնարավոր լինի դատել դրա հնարավոր ազդեցության վերաբերյալ: Աստղանշված հանձնառություններն ունեն կոնկրետության «միջին» կամ «բարձր» աստիճան:
2. Հանձնառության ձևակերպումը պետք է հստակ արտացոլի իր կարևորությունը բաց կառավարման տեսանկյունից: Մասնավորապես, այն պետք է վերաբերի տեղեկատվության մատչելիության, քաղաքացիական մասնակցության կամ հանրային հաշվետվողականության ԲԿԳ արժեքներից առնվազն մեկին:
3. Ամբողջությամբ իրականացնելու դեպքում հանձնառությունը «փոխակերպող» պոտենցիալ ազդեցություն պետք է ունենա:
4. Ի վերջո, հանձնառությունը պետք է զգալի առաջընթացի հասնի գործողությունների ծրագրի իրականացման ժամանակահատվածում՝ ստանալով «զգալի» կամ «ամբողջովին» կատարման գնահատական:

Այս չափանիշներից ելնելով՝ Հայաստանի գործողությունների ծրագիրը աստղանշված հանձնառություններ չունի ո՛չ միջանկյալ, ո՛չ էլ ամփոփիչ զեկույցում:

Միջանկյալ զեկույցում աստղանշված հանձնառությունները կարող են կորցնել իրենց աստղը, եթե գործողությունների ծրագրի իրականացման ավարտին դրանց կատարման աստիճանը զգալի կամ ամբողջական չի եղել, այսինքն ժամկետի ավարտին դրանք միայն որոշակի չափով են իրականացվել՝ ըստ ձևակերպման:

Այս բաժնի գծապատկերները ԱՅՄ միջանկյալ զեկույցի համար հավաքագրված տվյալների ահռելի ծավալի ընդամենը մի հատվածն են ներկայացնում: Հայաստանի վերաբերյալ տվյալների ամբողջական պատկերը տեսնելու համար այցելեք OGP Explorer՝ [www.opengovpartnership.org/explorer](http://www.opengovpartnership.org/explorer):

## «ԲԵՐԵՂ Է ԴԱ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ» ՓՈՓՈԽԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Հաճախ ԲԿԳ հանձնառությունները վերացական ձևակերպում ունեն կամ հստակորեն կապված չեն բաց կառավարման հետ, սակայն իրականում բերում են զգալի քաղաքական բարեփոխումների: Երբեմն էլ զգալի առաջընթացի հասած հանձնառությունները կարող են համապատասխան և հավակնոտ թվալ, բայց չեն բերում բաց կառավարմանը: Այս նրբությունները հաշվի առնելու և, որ ավելի կարևոր է, կառավարման պրակտիկայում փաստացի փոփոխությունները արձանագրելու համար, ԱՅՄ-ն ամփոփիչ զեկույցներում մտքեց նոր փոփոխական՝ «բերե՛լ է դա բաց կառավարմանը»: Այս փոփոխականը փորձում է ընդգրկել ավելին, քան արդյունքների չափումը և դիտարկում է, թե ինչպես է կառավարությունը գործնականում փոխվել հանձնառության իրականացման արդյունքում՝ ի տարբերություն ԱՅՄ-ի «աստղանշված հանձնառությունների», որոնք նկարագրում են հնարավոր ազդեցությունը:

ԱՅՄ հետազոտողները «Բերե՛լ է դա բաց կառավարմանը» փոփոխականը առանձին-առանձին են գնահատում ԲԿԳ յուրաքանչյուր այն արժեքի համար, որին այդ հանձնառությունը վերաբերվում է: Հարցն այն է, թե արդյո՞ք տվյալ հանձնառությունը ընդլայնել է կառավարության գործելակերպը ընդունված շրջանակներից դուրս: Գնահատման սանդղակը հետևյալն է.

- Վատթարացրել է՝ կառավարությունն ավելի փակ է դարձել ստանձնած հանձնառության համար իրականացված միջոցառումների արդյունքում:
- Չի փոխվել՝ կառավարության գործելակերպի ստատուս քվոն չի փոխվել:
- Մարզինալ՝ կա որոշակի փոփոխություն, որը սակայն աննշան ազդեցություն ունի բաց կառավարման բարելավման առումով:
- Զգալի՝ քաղաքականության համապատասխան ոլորտում բաց կառավարման առաջընթաց կա, բայց այն սահմանափակ բնույթ է կրում իր շրջանակների կամ ծավալի տեսակետից:

- Ակնառու՝ բարեփոխումներ, որոնք քաղաքականության համապատասխան ոլորտում փոխակերպել են սովորական գործելակերպը՝ բերելով ավելի բաց կառավարմանը:

Այս փոփոխականը գնահատելու համար հետազոտողները սահմանում են ստատուս քվոն, որն առկա էր գործողությունների ծրագրի իրականացման սկզբում: Այնուհետև նրանք գնահատում են փաստացի արդյունքները, որոնք բերել են բաց կառավարման փոփոխությանը:

Ձեկույցն ընթացելիս պետք է հաշվի առնել առկա սահմանափակումները: ԱՅՄ ամփոփիչ զեկույցները պատրաստվում են ծրագրի իրականացման ավարտից ընդամենը մի քանի ամիս հետո: Տվյալ փոփոխականն անդադառնում է այն արդյունքներին, որոնք կարող են դիտարկվել բաց կառավարման պրակտիկայում՝ իրականացման երկամյա ժամկետի ավարտին: Թե՛ զեկույցը և թե՛ այս փոփոխականը չեն հավակնում ազդեցության գնահատում իրականացնել, քանի որ դա հնարավոր չէ՝ մեթոդաբանական բազմաթիվ հարցերի և զեկույցի սեղմ ժամանակահատվածի պատճառով:

### ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Որպես ԲԿԳ մասնակից՝ երկրները պարտավոր են հանձնառություններ ստանձնել գործողությունների երկամյա ծրագրի միջոցով: Ամփոփիչ զեկույցները պարունակում են գնահատման լրացուցիչ չափորոշիչ՝ «Բերել է դա բաց կառավարմանը»: Ստորև բերված աղյուսակներում ամփոփ ներկայացված են ծրագրի ավարտին հանձնառությունների իրականացման մակարդակը և այս չափորոշիչի առաջընթացը: Միջանկյալ փուլում իրականացված հանձնառությունների համար ներկայացված է միայն «Բերել է դա բաց կառավարմանը» վերլուծությունը: Ավելի վաղ կատարված հանձնառությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք ծանոթանալ Հայաստանի ԱՅՄ միջանկյալ զեկույցին<sup>5</sup>:

Հայաստանի գործողությունների երկրորդ ծրագիրը հանձնառությունները է ներառում հանքարդյունաբերության ոլորտի (հանձնառություններ 1 և 2), առողջապահության և կրթության կառավարման ու ֆինանսավորման (հանձնառություններ 3 և 9), բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի թափանցիկության (հանձնառություն 4), պետական գնումների (հանձնառություն 5), համայնքային կառավարման (հանձնառություններ 6 և 11), քաղաքականության մշակման գործընթացում հանրային մասնակցության (հանձնառություններ 7 և 8), ինչպես նաև պետական ծառայողների համար տեղեկատվության ազատության և կոռուպցիայի վերաբերյալ դասընթացների (հանձնառություն 10) վերաբերյալ:

Վերոնշյալ հանձնառությունների համար համապատասխան ոլորտներում դրանց իրականացման ազդեցությունը գնահատող անկախ հաշվետվություններ չկան: Կառավարությունը և ԲԿԳ համայնքը կարող են ավելի շատ ջանքեր գործադրել այդ հանձնառությունների հաջող իրականացման մշտադիտարկման ուղղությամբ և իրազեկել դրանց ազդեցության կամ վաղ արդյունքների մասին:

Հաջողությամբ իրականացվելու դեպքում հանքարդյունաբերությանը վերաբերող հանձնառությունները կարող են զգալիորեն բարելավել բաց կառավարումն այդ ոլորտում: Կառավարությունն ամբողջությամբ չի իրականացրել 11-րդ հանձնառությունը, որը նախատեսվում էր ավարտել 2016 թ. ապրիլին և վերաբերում էր համայնքների ավագանիների նիստերի առցանց հեռարձակմանը:

Կառավարությունն ԻԱԿ աջակցությամբ հանրային իրազեկման արշավ նախաձեռնեց հեռուստատեսությամբ: Այնուամենայնիվ, դեռևս շատ քայլեր պիտի արվեն հայաստանյան հասարակության հետ հաղորդակցության բարելավման համար, քանի որ ԲԿԳ-ները նշել են Հայաստանի քաղաքացիական հասարակության անտեղյակությունը ԲԿԳ-ի, ինչպես նաև ԲԿԳ-ին Հայաստանի մասնակցության վերաբերյալ:

Գործողությունների երրորդ ծրագրի նախագիծը հրապարակվել է 2016 թ. հուլիսի 18-ին [www.ogp.am](http://www.ogp.am) կայքում և հաստատվել է կառավարության կողմից 2016 թ. օգոստոսի 11-ին: Գործողությունների ծրագրում ընդգրկված են հետևյալ ութ հանձնառությունները.

1. գործադիր մարմինների պաշտոնատար անձանց գործողությունների կարգավորման բարելավում,

2. պետական բյուջեից դրամաշնորհների հատկացման կարգի բարելավում,
3. բյուջեի թափանցիկության բարելավում,
4. բարձրաստիճան պաշտոնատար անձանց և փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի էլեկտրոնային համակարգի կատարելագործում,
5. տեղական իշխանությունների որոշումների էլեկտրոնային հարթակի ստեղծում,
6. լիցենզիաներ և ծանուցումներ տրամադրող մարմինների միասնական էլեկտրոնային գրանցամատյանի ստեղծում,
7. սոցիալական ծառայությունների վերաբերյալ հանրային իրազեկության և այդ ծառայությունների մատչելիության բարելավում,
8. զինկոմիսարիատներում ,մեկ պատուհանի» պիլոտային ծրագրի իրականացում:

### Աղյուսակ 3. Ընդհանուր պատկեր: Առաջընթացի գնահատում՝ ըստ հանձնառությունների

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ	ԿՈՆԿՐԵՏՈՒԹՅՈՒՆ				ՀԱՄԱՊԱՏԱԽԱՆՆՈՒԹՅՈՒՆ ԲԿԳ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ (ԸՍՏ ԶԱՎԵՐՊՄԱՆ)			ՊՈՏԵՆՑԻԱԼ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆ		ԿԱՏԱՐՈՒՄԸ		ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԱՎԱՐՏԻՆ		ԲԵՐԵՒ Է ԴՆ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ								
	Բացակայում է	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելի	Հանրային մասնակց	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը՝ հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող	Չմեկնարկված	Որոշակի	Զգալի	Ավարտված	Վատթարացել է	Զի վրիժ	Սարգինալ	Զգալի	Ավարտ	
1. «Հանրապետական երկրաբանական ֆոնդի» կողմից հավաքագրված տվյալների թվայնացում և հրապարակում			X		X		X			X		X								X		
2. Հանքարդյունաբերության թափանցիկության ապահովում			X		X	X				X			X								X	
3. Առողջապահության ֆինանսավորման տեղեկատվության հանրային մատչելիության ապահովում			X		X		X		X				X							X		
4. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրում			X		X				X					X						X		
5. Պետական գնումների բողոքարկման խորհրդի նիստերի առցանց հեռարձակում			X		X		X		X				X							X		
6. Համայնքային միկրոհարցումներ			X			X	X		X			X									X	
7. Պետական քաղաքականություն և օրենսդրական բարեփոխումներ			X			X			X				X								X	

<sup>1</sup>Կառավարության ինքնագնահատման զեկույցը տես հետևյալ հղումով՝ [https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia\\_2014-2016\\_Self-Assessment\\_ENG.pdf](https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia_2014-2016_Self-Assessment_ENG.pdf)  
<sup>2</sup>Գործողությունների երրորդ ծրագիրը տես այստեղ՝ [https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia\\_NAP3\\_2016-18.pdf](https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia_NAP3_2016-18.pdf)  
<sup>3</sup>«ԲԿԳ աշխատանքային խմբի հանդիպումը», OGP.am, 2016թ. փետրվարի 15, <http://bit.ly/2sbIPTP>:  
<sup>4</sup>«Տեղի ունեցավ ԲԿԳ աշխատանքային խմբի նիստը», OGP.am, 2015թ. հոկտեմբերի 7, <http://bit.ly/2sbNTGR>:  
<sup>5</sup>Տե՛ս՝ [https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia\\_IRM14-15\\_EN\\_0.pdf](https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia_IRM14-15_EN_0.pdf).



ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ	ԿՈՆԿՐԵՏՈՒԹՅՈՒՆ				ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԿԳ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ (ԸՆՏ ՁԱԿԵՐՊՄԱՆ)				ՊՈՏԵՆՑԻԱԼ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ				ԿԱՏԱՐՈՒՄԸ		ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԱՎԱՐՏԻՆ		ԲԵՐԵՆ Է ԴԱ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ					
	Բացակայում է	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելի	Հանրային մասնակցի	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիաներ և նորարարությունը՝ հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող	Չնկատված	Որոշակի	Զգալի	Ավարտված	Վատթարացել է	Չի փոխվել	Մարգինալ	Զգալի	Ավանտու	
8. Պետական կառավարման մարմինների օրինաստեղծ գործունեության մասին հանրության իրազեկում			X		X								X				X					
9. Հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների ընտրության և տարեկան բյուջեի պլանավորման թափանցիկություն			X			X	X								X				X			
10. Տեղեկատվության ազատության և հակակոռուպցիոն ոլորտներում կարողությունների զարգացում			X		Հստակ չէ							X							X			
11. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկություն			X		X								X							X		

# 1 | «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՖՈՆԴ» ՊՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՔԱԳՐԿԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ և ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

## Հանձնառության ձևակերպումը

«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում հավաքագրվող՝ ընդերքի երկրաբանական ուսումնասիրությունները, ինչպես նաև օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ընթացքում ստացված երկրաբանական և այլ տեղեկատվությունը՝ համապատասխան փաստաթղթերի (տեղեկանքների, հաշվետվությունների, գծագրական նյութերի և այլն) տեսքով, պահվում է թղթային տարբերակով, ինչը սահմանափակում է երկրաբանական տեղեկատվության մատչելիությունը հանրության համար:

Նախատեսվում է ամբողջությամբ թվայնացնել ֆոնդում առկա տեղեկատվական բազան՝ միաժամանակ ապահովելով նոր ստացվող նյութերի (քարտեզներ, ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվություններ, այլ փաստաթղթեր) թվայնացումը:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է թվայնացնել օգտակար հանածոների մոտ 750 հանքավայրի և 600 հանքերևակման վերաբերյալ կազմված շուրջ 12000 երկրաբանական հաշվետվություն և 8000 միավոր քարտեզագրական և գծագրական փաթեթ, ստեղծել ինտերնետային կայք, որտեղ կգտեղծվի ամբողջ նյութը (PDF, JPG, EXCEL և այլ ֆորմատներով)՝ գործածելով տեղեկատվության որոնելիության դյուրիանության սկզբունքը: Ընդ որում, կայքում տեղադրվող նյութերի ուսումնասիրության դյուրիանությունն ապահովելու համար կստեղծվի ինտերակտիվ քարտեզ և համապատասխան նյութերը կամրակցվեն ՀՀ համապատասխան տարածքներին:

Վերոնշյալ ինտերնետային կայքում տեղեկատվություն կիրապարակվի նաև օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին, ինչպես նաև մետաղային օգտակար հանածոների քարտեզ, որը ներկայումս հրապարակվում է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կայքում: Այսպիսով, բարելավվելու է հանրության համար տեղեկատվության հասանելիությունը:

Պատասխանատու կառույց՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն

Աջակցող կազմակերպություն(ներ)՝ չկան

Սկիզբը՝ 2014թ. դեկտեմբեր

Ավարտը՝ 2016թ. դեկտեմբեր

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ	ԿՈՆԿՐԵՏՈՒԹՅՈՒՆ				ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԿԳ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ (ԸՆՏ ՁԱԿԵՐՊՄԱՆ)				ՊՈՏԵՆՑԻԱԼ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ				ԿԱՏԱՐՈՒՄԸ		ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԱՎԱՐՏԻՆ		ԲԵՐԵՆ Է ԴԱ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ				
	Բացակայում է	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելի	Հանրային մասնակցի	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիաներ և նորարարությունը՝ հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող	Չնկատված	Որոշակի	Զգալի	Ավարտված	Վատթարացել է	Չի փոխվել	Մարգինալ	Զգալի	Ավանտու
			X		X		X						X						X		
														X							



## ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Այս հանձնառության նպատակն է թվայնացնել «Հանրապետական երկրաբանական ֆոնդում» (այսուհետ՝ ֆոնդ) առկա տվյալները՝ ստեղծելով հանրության համար հասանելի երկրաբանական տեղեկատվական շտեմարան, որը տեղեկություններ է պարունակում արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների, երկրաբանական հետազոտությունների, հանքային նյութերի քարտեզի, ինչպես նաև բնական պաշարների արդյունահանման հետ կապված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Ամբողջությամբ իրականացվելու դեպքում ֆոնդի տվյալները մատչելի կդառնան հանրության համար:

## ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

### Միջնաժամկետ՝ չմեկնարկած

Միջանկյալ զեկույցի մշակման պահին կառավարության կողմից այս հանձնառության կատարման ուղղությամբ քայլեր չէին ձեռնարկվել: ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը դեռևս բանակցում էր ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) հետ՝ այս ծրագրի իրականացման համար ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով:

### Ավարտին՝ զգալի

Կառավարությունը ֆոնդին փոխանցել է անհրաժեշտ տեխնիկական սարքավորումները, մասնավորապես համակարգիչները և սկաներները<sup>2</sup>: Այնուհետև, կառավարության տվյալների համաձայն, 2016 թ. սեպտեմբերի կեսերին թվայնացվել է շուրջ 35000 էջ նյութ և 2500 քմ քարտեզ: 2016 թ. հոկտեմբերից ֆոնդի մասին տեղեկությունները հասանելի են առցանց<sup>3</sup>: Ըստ կառավարության՝ հանձնառությամբ նախատեսված աշխատանքների կեսն ավարտվել է 2016 թ. դեկտեմբերի կեսերին, և կայքը գրանցել է մոտ 1200 այցելություն: Կառավարությունը հանրությանը կայքի մասին տեղեկացրել է երկրորդ հանձնառության հետ կապված աշխատանքների, այն է՝ հանքարդյունաբերության թափանցիկության ապահովման շրջանակներում: Օրինակ, 2016 թ. նոյեմբերի 25-ին՝ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) աշխատանքային խմբի անդրանիկ նիստի ժամանակ, կառավարության ներկայացուցիչները տեղեկացրեցին կայքի մեկնարկի մասին<sup>4</sup>, և դա հաղորդվեց նաև հեռուստատեսային նորություններով:

Ներկայումս կայքը տեղեկատվություն է տրամադրում մի քանի հանքավայրերի մասին: Որոշ հաշվետվություններ թվագրված են դեռևս 1960-ական և 1970-ական թվականներով: Օրինակ, կայքը ներկայացնում է 1965 թ. հաշվետվությունը Ջրաբերի պեմզային հանքավայրի բաժնետոմսերի վերաբերյալ<sup>5</sup>, 1981-1983, 1966, 1958-1961թթ., և 1962 թ. իրականացված հետազոտությունները Կառնուտի պղնձի հանքավայրերի վերաբերյալ<sup>6</sup> կամ Ծարասարի ոսկու և արծաթի հանքավայրերի<sup>7</sup>1979-1983թթ. երկրաբանական ուսումնասիրությունը<sup>8</sup>: Կան նաև վերջին տարիներին իրականացված որոշ հետազոտությունների զեկույցներ: Օրինակ, Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի էջը պարունակում է հաշվետվություններ, որոնք թվագրված են 1991-2014 թթ.:

Սույն զեկույցի մշակման պահին (2017 թ. հունվարի կես) կայքում առկա երեք էջերը, որոնք վերաբերում են (1) հանքանյութերի դուրսբերման նպատակով հանքավայրերի շահագործման<sup>9</sup>, (2) երկրաբանական հետազոտությունների իրականացման<sup>9</sup> և (3) ջրային ռեսուրսների վերաբերյալ հետազոտությունների իրականացման<sup>10</sup> իրավունքներին, տեղեկատվություն չեն պարունակել արդեն իսկ հատկացված իրավունքների ու լիցենզիաների վերաբերյալ:

## ԲԵՐԵՆ Է ԴԱ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

### Տեղեկատվության մատչելիություն՝ մարզինալ

Հայաստանում օգտակար հանածոների շահագործման հետ կապված երկրաբանական տվյալների վերաբերյալ սահմանափակ թվային տեղեկատվություն կա: Հետևաբար կայքի ստեղծումը դրական քայլ է թվային ձևաչափով նման տեղեկատվության մատչելիության բարելավման ուղղությամբ:

Այնուամենայնիվ, կայքի օգտակարությունն ավելացնելու համար ներկայումս վերբեռնված տվյալները պետք է ներկայացվեն առավել հարմարավետ և մեքենայաընթեռնելի ձևաչափով: Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (ԹԻՀԿ) ներկայացուցիչները գտնում են, որ փաստաթղթերը և քարտեզները PDF կամ JPG ձևաչափերով սկանավորելը դեռ թվայնացում չէ: Ակնկալվում է, որ լիովին ֆունկցիոնալ լինելուց հետո կայքը օգտակար տեղեկատվական աղբյուր կդառնա բնապահպանական խնդիրների շուրջ աշխատող հետազոտողների և ԶՀԿ-ների համար:

## ՇԱՐՈՒՆԱԿՎԵՆ Է

Հանձնառությունը չի ընդգրկվել գործողությունների երրորդ ծրագրում:

<sup>1</sup> ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, այցելության ամսաթիվ՝ 2017թ. հունիսի 11-ին, <http://www.minenergy.am/>:

<sup>2</sup> ՀՀ կառավարության որոշում թիվ 677-Ա, arlis.am, 2016թ. հունիսի 30, <http://www.arlis.am/>: Անհատույց օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին այս որոշումը հասանելի է հայերեն լեզվով

<sup>3</sup> Հանրապետական երկրաբանական ֆոնդ, այցելության ամսաթիվ՝ 2017թ. հունիսի 11-ին, <https://www.geo-fund.am/hy/>

<sup>4</sup> «Կայացել է Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության քաղաքաշահառու խմբի առաջին նիստը», Gov.am, 2016թ. նոյեմբերի 25, <http://bit.ly/2rQbBqA>

<sup>5</sup> Հանրապետական երկրաբանական ֆոնդ, այցելության ամսաթիվ՝ 2017թ. հունիսի 11-ին, <http://bit.ly/2rQwZvG>, տե՛ս «ՀՀ բնական պաշարներ» աղյուսակը

<sup>6</sup> Նույն տեղում

<sup>7</sup> Նույն տեղում

<sup>8</sup> «Տրամադրված իրավունքներ», Հանրապետական երկրաբանական ֆոնդ, այցելության ամսաթիվ՝ 2017թ. հունիսի 9-ին, <http://bit.ly/24epy5>

<sup>9</sup> Նույն տեղում, <http://bit.ly/2scC5Ei>

<sup>10</sup> Հասանելի է <https://www.geo-fund.am/hyhttps://www.geo-fund.am/hy/Տրամադրված-իրավունքներ? filter=water#loads> հասցեով

## 2 | ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՈՒՄ

### Հանձնառության ձևակերպումը

Հանքարդյունաբերական ոլորտում առկա իրավիճակը չի բավարարում պետության և հասարակության կողմից ներկայացվող արդի պահանջներին. մասնավորապես, ծախսերի և եկամուտների վերաբերյալ հանքարդյունաբերական ընկերությունների և պետության հաշվետվողականության մակարդակը բարելավման կարիք ունի:

Նախաձեռնությանը միանալը կբարելավի ոլորտի թափանցիկությունը, կապահովի հաշվետվողականության բարձր մակարդակ, ինչպես նաև կնպաստի ներդրումային միջավայրի բարելավմանը:

Պատասխանատու կառույց՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն

Աջակցող հաստատություններ՝ ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն

Ակիզբը՝ 2015թ. հուլիս

Ավարտը՝ 2016թ. դեկտեմբեր

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ	ԿՈՆԿՐԵՏՈՒԹՅՈՒՆ				ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԿԳ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ (ԸՍՏ ՁևԱԿԵՐՊՄԱՆ)				ՊՈՏԵՆՑԻԱԼ ԱՃՂԵՑՈՒԹՅՈՒՆԸ				ԿԱՏԱՐՈՒՄԸ		ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԱՎԱՐՏԻՆ		ԲԵՐԵՒ Է ԴԱ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ					
	Բացակայում է	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելի	Հանրային մասնակց	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեղեկագրի և տրոստարությունը՝ հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող	Չմեկնարկված	Որոշակի	Զգալի	Ավարտված	Վատթարացել է	Չի փոխվ	Մարդիկ	Զգալի	Ավանդ	
			X		X	X					X			X						X		

### ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Հանձնառության նպատակն է արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը (EITI/ԱՃԹՆ) միանալու միջոցով բարելավել հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկությունը: Հանձնառության մեջ նշվում է նաև քննարկումների, բանակցությունների և այլ անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների անցկացման մասին՝ առանց կոնկրետ արդյունքները հստակեցնելու:

### ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

#### Միջնաժամկետ՝ որոշակի

Միջանկյալ զեկույցի մշակման ժամանակ կառավարությունը հայտարարել էր ԱՃԹՆ-ին միանալու պատրաստակամության մասին, իսկ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարին նշանակել որպես Հայաստանում ԱՃԹՆ-ի իրականացման ղեկավար:

#### Ավարտին՝ զգալի

Կառավարությունը զգալի առաջընթաց է արձանագրել այս հանձնառության իրականացման հարցում: Կառավարությունը մի շարք միջոցառումներ է ձեռնարկել ԱՃԹՆ-ին միանալու համար: Նախ և առաջ, գործընթացի իրականացման ղեկավարի

դերում նշանակվել է բարձրաստիճան պաշտոնյա անձ՝ կառավարության աշխատակազմի ղեկավարը: Երկրորդ, 2016 թ. դեկտեմբերի 26-ին կայացած իր երկրորդ նիստի ժամանակ կառավարությունը ձևավորել է ԱՃԹՆ միանալու գործընթացը վերահսկող բազմաշահառու խումբ, քննարկել և հաստատել է խմբի 2017-2018թթ. աշխատանքային պլանը:

Բազմաշահառու խումբն ընդգրկում է կառավարության վեց ներկայացուցիչ , ԶՀԿ համայնքի չորս ներկայացուցիչ (որոնք ներկայացնում են ԹԻՀԿ-ը, «Էկոլոգիական իրավունք» ՀԿ-ն, «Երիտասարդ բնապահպան իրավաբանների և տնտեսագետների ասոցիացիան» և «ԷկոԼուր» ՀԿ-ն) և գիտական համայնքի մեկ ներկայացուցիչ (Երևանի պետական համալսարանի Կայուն զարգացման կենտրոնից): Բազմաշահառու խմբի ստեղծման մասին կառավարության որոշման նախագիծը շրջանառության մեջ էր 2016 թ. սեպտեմբերից<sup>1</sup>: 2016 թ. սեպտեմբերի 19-20-ը կառավարությունը, ԱՄՆ ՄՁԳ-ի համագործակցությամբ, ԱՃԹՆ հայաստանյան բազմաշահառու խմբի և հանքարդյունաբերության ոլորտում աշխատող այլ մասնագետների համար կազմակերպել էր դասընթաց «Ավանների ստուգում և վերագործարկման կանխում» թեմայով: Կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարը հարցազրույց է տվել հեռուստաընկերություններից մեկին՝ Հայաստանում ԱՃԹՆ-ի իրականացման գործընթացի վերաբերյալ<sup>2</sup>:

ԱՃԹՆ աշխատանքային խումբը պաշտոնապես ձևավորվել է 2016 թ. նոյեմբերի 24-ին վարչապետի թիվ 1104-Ա որոշմամբ: 2016 թ. նոյեմբերի 26-ին այն անցկացրել է իր առաջին պաշտոնական նիստը: 2016 թ. դեկտեմբերի 26-ին կայացած իր երկրորդ նիստի ընթացքում ԱՃԹՆ աշխատանքային խումբը քննարկել և հաստատել է 2017-2018թթ. աշխատանքային պլանը<sup>3</sup>: Աշխատանքային պլանը նախատեսում է գործունեության հետևյալ ուղղությունները.

1. արդյունահանող ճյուղերի և ԱՃԹՆ մասին տեղեկատվությունը մատչելի դարձնել հանրության համար՝ համապատասխան կայքի ստեղծման, հաղորդակցման ռազմավարության մշակման և հաստատման, ինչպես նաև 2018 թ. հոկտեմբերին կազմակերպվող համաժողովի համար ԱՃԹՆ զեկույցի պատրաստման միջոցով,
2. ստեղծել ճանապարհային քարտեզ՝ բացահայտելու շահույթ ունեցող սեփականատերերին, և մինչև 2017 թ. սեպտեմբեր այն ներկայացնել ԱՃԹՆ քարտուղարությանը,
3. ուսումնասիրել և վերլուծել ՀՀ օրենսդրությունը՝ ԱՃԹՆ պահանջների հետ կապված բացերը բացահայտելու և 2017 թ. դեկտեմբերին համապատասխան գործողությունների ծրագիրը հաստատելու համար,
4. ուսումնասիրել միջազգային լավագույն փորձը և ճանապարհային քարտեզ մշակել ըստ ԱՃԹՆ 2016 թ. ստանդարտի 8.3.a.iii<sup>4</sup> կետով սահմանված պահանջների,
5. Հայաստանի համար ապահովել ԱՃԹՆ թեկնածու երկրի կարգավիճակ,
6. ԱՃԹՆ ստանդարտներին համապատասխան ամբողջական հաշվետվության պատրաստել մինչև 2018 թ. օգոստոսի վերջ և մինչև 2018 թ. դեկտեմբեր վերանայել ԱՃԹՆ քարտուղարության նկատառումները:

Այս հանձնառությունն իրականացնելու հարցում կառավարությանն աջակցելու համար Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանությունը, ԱՄՆ ՄՁԳ հայաստանյան գրասենյակը և Համաշխարհային բանկը փորձագետներ են հրավիրել Հայաստանում սեմինարներ անցկացնելու համար, որպեսզի օգնեն Հայաստանին հաջողությամբ զարգացնել ԱՃԹՆ թեկնածուական հայտը և դառնալ ԱՃԹՆ թեկնածու երկիր<sup>5</sup>: Այս գործողության իրականացման ուղղությամբ կառավարության ջանքերի մասին տեղեկատվությունը հասանելի է կառավարության կայքում<sup>6</sup>:

ԱՀՄ հետազոտողը նշում է, որ 2017 թ. մարտի 10-ին Հայաստանը դարձավ ԱՃԹՆ 52-րդ թեկնածու երկիրը<sup>7</sup>: Այնուամենայնիվ, հետազոտողը նաև նշում է, որ Հայաստանի ԱՃԹՆ թեկնածության հաստատումը տեղի է ունեցել գործողությունների երկրորդ ծրագրի ավարտից շատ ավելի ուշ (2016 թ. հունիսի վերջ կամ 2016 թ. դեկտեմբերի վերջ): Հաշվի է առնվել նաև այն հանգամանքը, որ հանձնառության ձևակերպումը չի ներառում գործողությունների ծրագրի ավարտի պահին նախաձեռնությանը միանալու կառավարության մտադրությունը: Այդ պատճառով 2016 թ. դեկտեմբերի վերջի դրությամբ ԱՀՄ հետազոտողը գնահատել է կատարման մակարդակը որպես «զգալի»:

## ԲԵՐԵՆ Է ԴԱ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

### Տեղեկատվության մատչելիություն՝ չի փոխվել Քաղաքացիական մասնակցություն՝ մարզինալ

Թեև Հայաստանը զգալի քայլեր է կատարել ԱՃԹՆ թեկնածուի կարգավիճակի ուղղությամբ, այս զեկույցը գրելու պահին (2017 թ. հունվար) չկա որևէ հիմնավոր ապացույց, որ այդ հանձնառության իրականացումը բարելավել է երկրում արդյունահանող ծյուղերի մասին տեղեկատվության մատչելիությունը: Ակնկալվում է, որ տեղեկատվության մատչելիությունը կբարելավվի այն ժամանակ, երբ կառավարությունը կկիրառի ԱՃԹՆ ստանդարտները և կիրառարակի իր առաջին ԱՃԹՆ զեկույցը:

Բազմաշահառու խմբի ստեղծումը քաղաքացիական հասարակությանը հնարավորություն է տալիս մասնակցել արդյունաբերման ոլորտի կառավարմանը: Այնուամենայնիվ, ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչների, կառավարության և ԶՀԿ համայնքի միջև անհամաձայնություններ են եղել բազմաշահառու խմբի շրջանակներում որոշումների կայացման հետագա գործընթացի վերաբերյալ: ԶՀԿ-ներն ակնկալում էին կոնսենսուսի վրա հիմնված որոշումների ընդունման համակարգ: 2016 թ. մայիսին կայացած հանդիպմանը կառավարության ներկայացուցիչներն ու ԶՀԿ-ները համաձայնության եկան որոշումների կայացման գործընթացի շուրջ:

## ՇԱՐՈՒՆԱԿԿԵՆ Է

Ըստ ԹԻՀԿ-ի, կառավարությունը մերժեց գործողությունների երրորդ ծրագրում այս հանձնառությունը ներառելու առաջարկը: Կառավարությունը գտնում է, որ ԱՃԹՆ անդամակցության հաջող հայտի ներկայացման պատրաստման գործընթացն արդեն իսկ պետական քաղաքականություն է, որն արտացոլված է էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության և այլ պետական ծրագրերում: Հետևաբար, քանզի այս հանձնառությունը հանդիսանում է միջազգային այլ համաձայնագրերի իրականացման նախապայման, կառավարությունը շահագրգռված է դրա լիարժեք իրականացման մեջ, անկախ նրանից՝ ներառված է դա ԲԳԿ գործողությունների ծրագրում, թե ոչ:

## 3 | ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

### Հանձնառության ձևակերպումը

Առողջապահության ֆինանսավորման համակարգի զարգացումների հետ կապված մեծ բաց կա. քաղաքացիները չգիտեն և չեն կարողանում իրացնել իրենց իրավունքները առողջապահության համակարգի մի շարք օղակներում, այդ թվում՝ հիվանդանոցային բուժօգնություն և առողջության առաջնային պահպանման ծառայություններ ստանալիս: Բուժօգնության կազմակերպման և ֆինանսավորման որոշ չափորոշիչներում այդ գործընթացները նկարագրված են, սակայն չկան այդ հարաբերությունների զարգացումները ցուցադրող դինամիկ և թափանցիկ համակարգեր:

Ստեղծել առողջապահության համակարգի ֆինանսավորման վերաբերյալ հարթակ, որտեղ բնակիչները, մասնագետները և հանրությունը կարող են տեղեկատվություն ստանալ պետության կողմից երաշխավորված ծրագրերի ֆինանսավորման, հիմնական ծառայությունների փաթեթի վերաբերյալ, ինչպես նաև այն մասին, թե երբ պետք է հիվանդը վճարի մատուցված ծառայության դիմաց, իսկ երբ՝ ոչ, ինչպես կարելի է դեղատոմսեր ստանալ, որոնք կարող են վճարվել պետության կողմից, ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվությունների և այլ հարցերի վերաբերյալ:

Պատասխանատու կառույց՝ ՀՀ առողջապահության նախարարություն

Աջակցող կազմակերպություններ՝ չկան

Սկիզբը՝ 2014թ. սեպտեմբեր

Ավարտը՝ 2015թ. սեպտեմբեր

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ	ԿՈՆԿՐԵՏՈՒԹՅՈՒՆ				ՀԱՄԱՊԱՏԱՍԻՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԿԳ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ (ԸՍՏ ՁԱՍԿԵՐՊՄԱՆ)			ՊՈՏԵՆՑԻԱԿ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ		ԿԱՏՐՈՒՄԸ		ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԱՎԱՐՏԻՆ		ԲԵՐԵՆ Է ԴԱ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ								
	Բացակայում է	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելի	Հանրային մասնակց	Հանրության արջև հաշվետվողականություն	Տեղեկատվության և տրանսպարենտության համուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող	Չմեկնարկված	Որոշակի	Զգալի	Ավարտված	Վատթարացել է	Չի փոխվ	Մարդկնալ	Զգալի	Ավարտ	
		X		X			X		X				X			X						
												X										

## ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Այս հանձնառությունը նախատեսում է առողջապահության համակարգի ֆինանսավորման հարթակի ստեղծում, որից օգտվողները կտեղեկանան պետության կողմից տրամադրված անվճար առողջապահական ծառայությունների և առողջապահության ֆինանսավորման վերաբերյալ

## ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

### Միջնաժամկետ՝ որոշակի

Առողջապահության ֆինանսավորման <http://sha.am> հարթակը ստեղծվել է 2014 թ. հունվարի 1-ին, նախքան գործողությունների ծրագրի մեկնարկը: Այնուամենայնիվ, պետության կողմից երաշխավորված ծառայությունների

<sup>1</sup> ՀՀ կառավարության որոշման նախագիծ, Gov.am, 2016 թ. սեպտեմբերի 8, PDF ձևաչափով, <http://bit.ly/2rW5Oya>  
<sup>2</sup> Նախաձեռնություն հակակոռուպցիոն քայլերի շրջանակում. հյուրը՝ Դավիթ Հարությունյան, YouTube հարցազրույցի տեսագրություն, 9:57, Հրապարակում հեռուստաօրագիր, 2015 թ. նոյեմբերի 28, <https://www.youtube.com/watch?v=pFnKjvFX8KI>  
<sup>3</sup> «ԱՃԹՆ աշխատանքային ծրագիր», Gov.am, 2016 թ. դեկտեմբերի 26, PDF ձևաչափով, <http://bit.ly/2s6PVXI>  
<sup>4</sup> «8.3.a.iii» պահանջը կարելի է բացատրել այսպես: «8.3»՝ նշում է «ԱՃԹՆ վավերացման ժամկետներն ու հետևանքները», «a»՝ նշանակում է «ԱՃԹՆ-ի հարցում առաջընթացի գնահատում», և «iii»՝ «պահանջներից դուրս գործադրված ջանքեր»:  
<sup>5</sup> Երևանում Բրիտանական դեսպանատան ֆեյսբուքյան էջ, այցելության ամսաթիվ՝ 2017թ. հունիսի 9-ին, <http://bit.ly/2sMLVcK>:  
<sup>6</sup> «ԱՃԹՆ-ի հայաստանյան գործընթաց», Gov.am, այցելության ամսաթիվ՝ 2017թ. հունիսի 12-ին, <http://gov.am/en/ameniaei>: ԱՃԹՆ բազմաշահառու խմբի մասին ավելի իմանալու համար տե՛ս «ԱՃԹՆ բազմաշահառու խումբը» նույն կայքում՝ <http://gov.am/en/eitimg/>  
<sup>7</sup> Պաշտոնական լրահոս. «Հայաստանը դարձել է ԱՃԹՆ թեկնածու երկիր», Gov.am, 2017թ. մարտի 10, <http://bit.ly/2sgYCl0>: Հայաստանի ԱՃԹՆ թեկնածության մասին ավելին իմանալու համար, տե՛ս «ԱՃԹՆ խորհուրդը ողջունում է Հայաստանի միացումը ԱՃԹՆ ընտանիքին», eiti.org, 2017թ. մարտի 9, <http://bit.ly/2rjCPaf>:

վերաբերյալ կայքէջն ընթացիկ հաշվետվության մշակման պահին դեռևս ստեղծման փուլում էր: 2016 թ. հուլիսին հարթակը պարունակում էր PDF ֆորմատով ավելի քան 29 տարբեր հաշվետվություն: Ըստ կառավարության տվյալների՝ ստեղծվելուց ի վեր հարթակն ունեցել է մոտ 10000 այց: Առողջապահական տվյալների բազան հասանելի է Առողջապահության նախարարության «Ամբուլատոր կլինիկայի անալիտիկ հաշվետվական հարթակում»<sup>1</sup>:

**Ավարտին՝ ավարտված**

Հարթակը գործում է, և 2016 թ. հունիսի 10-ին Առողջապահության նախարարությունն այն ներկայացրել է առողջապահության ոլորտում աշխատող ինը ԶԿ-ների: Կայքի շնորհանդեսին մասնակցած՝ ԻԱԿ-ի և ԹԻՀԿ-ի ներկայացուցիչների կարծիքով, կայքը բավականաչափ հարմար չէ օգտատերերի համար: Բացի այդ, Առողջապահության նախարարությունը պետք է ավելի ակտիվ խթանի դրա օգտագործումը: Ավելին, դժվար է պնդել, որ նշված կայքերում առողջապահության ֆինանսավորման վերաբերյալ առկա տեղեկատվությունն ամբողջական է:

**ԲԵՐԵՆ Է ԴԱ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ**

**Տեղեկատվության մատչելիություն՝ չի փոխվել**

Հանձնառությունը նպատակ ուներ հանրությանը և առողջապահական ոլորտի մասնագետներին մատչելի տեղեկատվություն տրամադրել պետության կողմից երաշխավորված առողջապահական ծառայությունների վերաբերյալ: Ըստ ԹԻՀԿ-ի, հանրությունը լավ տեղեկացված չէ այս գործիքի առկայության մասին: Այս զեկույցը գրելու պահին հանձնառության իրականացումը որևէ բարելավում չի բերել տեղեկատվության մատչելիության առումով: Թեև վերոնշյալ երկու հարթակներում առկա է որոշ տեղեկատվություն, ԹԻՀԿ-ը նշում է, որ առողջապահության ոլորտում աշխատող ԶԿ-ները ակտիվորեն չեն օգտվում դրանցից: Առողջապահության նախարարությունը չի հրապարակում կայքի հիմնական օգտատերերի վիճակագրությունը, ոչ էլ տվյալները որոնված տեղեկատվության մասին:

**ՇԱՐՈՒՆԱԿԿԵՆ Է**

Հանձնառությունը չի ընդգրկվել գործողությունների երրորդ ծրագրում: Կայքն առավել օգտակար և գործածելի դարձնելու համար տեղեկատվությունը պետք է հասանելի լինի ոչ միայն PDF, այլև մեքենայաընթեռնելի ֆորմատով: Բացի այդ, կայքի օգտակարությունը բարելավելու համար կարելի է տեղեկատվություն տրամադրել մուտքերի և ներբեռնումների քանակի և օգտագործողների վիճակագրություն մասին:

**4 | ՀՀ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԻ և ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ**

**Հանձնառության ձևակերպումը**

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի հրապարակման ենթակա տվյալների ցանկը, որը հաստատվել է ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի թիվ 1835-Ն որոշմամբ, հնարավորություն չի ընձեռում թափանցիկ դարձնելու բարձրաստիճան պաշտոնատար և նրանց հետ փոխկապակցված անձանց հայտարարագրերում ներառված գույքի բոլոր գործարքների վերաբերյալ լիարժեք տվյալները: Մասնավորապես, դրանք սահմանափակված են գործարքների գնային շեմերով:

Հանձնաժողովը նախատեսում է վերացնել նման սահմանափակումները և ընդլայնել հանրությանը տրամադրվող տվյալների ցանկը՝ դրանով իսկ բարելավելով ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի մատչելիությունը հասարակության համար:

Պատասխանատու կառույց՝ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով (համաձայնությամբ)

Աջակցող կազմակերպություններ՝ ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն

Սկիզբը՝ 2014թ. նոյեմբեր

Ավարտը՝ 2015թ. հունիս

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ	ԿՈՆԿՐԵՏՈՒԹՅՈՒՆ				ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԿԳ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ (ԸՍՏ ԶԱՎԿԵՐՊՄԱՆ)				ՊՈՏԵՆՑԻԱԼ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ				ԿԱՏԱ-ՐՈՒՄԸ		ՄԻՋՆԱ-ԺԱՄԿԵՏ ԱՎԱՐ-ՏԻՆ		ԲԵՐԵՆ Է ԴԱ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ					
	Բացակայում է	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելի	Հանրային մասնակց	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը՝ հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ռչ մի	Փոքր	Զափանի	Փոխակերպող	Զանկարված	Որոշակի	Զգալի	Ավարտված	Վատթարացել է	Չի փոխվ	Մարգինալ	Զգալի	Ավատ	
		X		X					X						X		X					
															X							

**ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Հանձնառությունը նպատակ ունի բարելավելու բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի թափանցիկությունը: Գործողությունների երկրորդ ծրագրի ընդունման ժամանակ որոշակի արժեքային շեմեր են սահմանվել հայտարարագրվող գույքի և եկամուտների համար: Կառավարությունը պարտավորվել է վերացնել այդ շեմերը, որպեսզի պետական պաշտոնյաների ունեցվածքի վերաբերյալ ավելի շատ տեղեկություններ մատչելի դառնան հանրության համար:

**ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

**Միջնաժամկետ՝ ավարտված**

Ընթացիկ հաշվետվության մեջ նշվել էր, որ կառավարությունը հաստատել է «ՀՀ կառավարության 2011 թ. դեկտեմբերի 15-ի թիվ 1835-Ն և 2011 թ. դեկտեմբերի 15-ի թիվ 1819-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» որոշումը, որով վերացվել են հայտարարագրվող գույքի և եկամտի արժեքային շեմերը: 2014 թվականից ի վեր բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարությունները հասանելի են եղել էթիկայի հանձնաժողովի կայքէջում<sup>1</sup>:

<sup>1</sup> «Ամբուլատոր պոլիկլինիկական հաշվետվական վերլուծական պորտալ, Առողջապահության նախարարություն, այցելության ամսաթիվ՝ 2017թ. հունիսի 13-ին <https://pbf.am/public-reports.aspx>.



## ԲԵՐԵՆ Է ԴԱ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

### Տեղեկատվության մատչելիություն՝ չի փոխվել

Բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաներ 2015 թ. իրենց հայտարարագրերը ներկայացրել են արդեն վերանայված ձևաչափով: Այնուհանդերձ, ըստ լրատվամիջոցների հաղորդման՝ ոչ բոլոր բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարագրերն են հասանելի առցանց<sup>2</sup>: Լրատվամիջոցները նվազեցված շեմերի շնորհիվ ստացած նոր բացահայտումների մասին որևէ տեղեկատվություն չիրապարակեցին:

Ինչպես նշվել էր ընթացիկ զեկույցում, Հայաստանում քաղաքական ուժը և տնտեսական շահերը սերտորեն փոխկապակցված են, իսկ Էթիկայի հանձնաժողովը հայտարարագրերը ստուգելու կամ չկատարելու համար պատժամիջոցներ կիրառելու մանդատ կամ ռեսուրս չունի: Եթե հայտարարագրերի ստուգում չի իրականացվում, ապա նշանակություն չունի, թե բարձրաստիճան պաշտոնյաների կողմից հայտարարագրումն իրականացվում է 20000 կամ 100000 ԱՄՆ դոլարից ավել, թե պակաս արժեքով գործարքների համար: Ինչպես նշվեց վերևում, թեև հայաստանյան լրատվամիջոցները և ԹՀԿ-ներն ակտիվ մշտադիտարկում են բարձրաստիճան անձանց հայտարարագրերի հրապարակումները, շեմերի վերացումը չնպաստեց նոր տվյալների բացահայտման:

## ՇԱՐՈՒՆԱԿԿԵՆ Է

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարագրերին առնչվող հանձնառությունը տեղ է գտել նաև 2016-2018 թվականների գործողությունների երրորդ ծրագրում: Կառավարությունը որոշեց կատարելագործել բարձրաստիճան պաշտոնյաների և նրանց հետ առնչվող անձանց ակտիվների և եկամուտների հայտարարագրերի էլեկտրոնային համակարգը: Գործողությունների հաջորդ ծրագրում ստանձնած հանձնառությունը նախատեսում է հրապարակել այն պաշտոնատար անձանց (եկամուտների հայտարարագրման ենթակա) անունները, որոնք օրենքով սահմանված ժամկետներում հայտարարագրեր չեն ներկայացրել: Այն ներառում է նաև բաց տվյալների ձևաչափով ինտերակտիվ եղանակով տվյալների դուրսբերման հնարավորությունը:

## 5 | ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՌՑԱՆՑ ՅԵՌԱՐՁԱԿՈՒՄ

### Հանձնառության ձևակերպումը

Կազմակերպության մոնիտորինգի արդյունքները վկայում են, որ Գնումների բողոքարկման խորհրդի որոշումները շատ դեպքերում հարցեր են առաջացնում, որոնց պատասխանները գտնելու համար պարզապես որոշումների հրապարակումը բավարար չէ, և անհրաժեշտ է հասկանալ նաև, թե ինչպես են դրանք ընդունվել խորհրդի նիստերի ժամանակ:

Պատասխանատու կառույց՝ ՀՀ կառավարության աշխատակազմ

Աջակցող կազմակերպություններ՝ չկան

Սկիզբը՝ 2015թ. մայիս

Ավարտը՝ 2015թ. հունիս

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ	ԿՈՆԿՐԵՏՈՒԹՅՈՒՆ				ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԿԳ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ (ԸՍՏ ԶԱՎԵՐՊՄԱՆ)				ՊՈՏԵՆՑԻԱԼ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ				ԿԱՏԱՐՈՒՄԸ		ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԱՎԱՐՏԻՆ		ԲԵՐԵՆ Է ԴԱ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ					
	Բացակայում է	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելի	Հանրային մասնակց	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը՝ համուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխանցարող	Չմեկնարկված	Որոշակի	Զգալի	Ավարտված	Վատթարացել է	Չի փոխվել	Մարդիկ	Զգալի	Ավարտ	
			X		X		X		X						X				X			
															X							

## ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Այս հանձնառության նպատակը պետական գնումների բողոքարկման խորհրդի որոշումներն ավելի թափանցիկ և հանրության համար հասանելի դարձնելն է: Որոշումների ընդունման գործընթացի թափանցիկության ապահովումը կարող է նպաստել գնումների համակարգի հանդեպ հանրային վստահության ավելացմանը

## ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

### Միջնաժամկետ՝ ավարտված

2015թ. հունիսից Գնումների բողոքարկման խորհրդի նիստերը կանոնավոր կերպով հեռարձակվում են առցանց<sup>1</sup>:

## ԲԵՐԵՆ Է ԴԱ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

### Տեղեկատվության մատչելիություն՝ մարզինալ

Պետական գնումների բողոքարկման խորհրդի որոշումները հաճախ թափանցիկ չէին և պատշաճ կերպով չէին հասցեագրում բողոքող կողմերի մտահոգությունները: Ըստ կառավարության՝ գնումների բողոքարկման խորհրդի նիստերի առցանց հեռարձակման շնորհիվ բողոքների քանակը նշանակալիորեն ավելացել է: Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (ԹԻՀԿ) մոնիտորինգի հաշվետվության<sup>2</sup> տվյալներով, 2016թ. առաջին

<sup>1</sup> Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով, այցելության ամսաթիվ՝ 2017թ. հունիսի 12-ին, <http://ethics.am/en/>  
<sup>2</sup> «Ինչ է թաքցնում Շուշան Պետրոսյանը», shame.am, 2016թ. սեպտեմբերի 3, <http://bit.ly/2sVHsVa>: Պաշտոնյաների կողմից եկամուտների հայտարարագրեր չներկայացնելու դեպքերի մասին ավելի շատ մամուլ հարդրողներ տեսնելու համար, տես [usaarmenianews.com](http://usaarmenianews.com)-ի 2016թ. սեպտեմբերի 7-ի հոդվածը. <http://bit.ly/2s4As8N>, Ալիսա Մանուկյան, «Վերին արտի Շուշանը», [blognews.am](http://blognews.am), 2016թ. սեպտեմբերի 5. <http://bit.ly/2zpfShg>

կիսամյակի ընթացքում ներկայացվել է 69 բողոք՝ 2015թ. նույն ժամանակահատվածի 54 և 2014թ. 48 բողոքի համեմատ: 2016թ.-ին 32 բողոք ստացել է դրական պատասխան (2015թ.՝ 24, իսկ 2014թ.՝ 22): ԹԻՉԿ զեկույցում նշվում է նաև, որ Պետական գնումների բողոքարկման խորհրդի աշխատանքում հաշվետվողականության ուղղությամբ դրական տեղաշարժ է նկատվում: Այնուամենայնիվ, առցանց հեռարձակման որակի և ամբողջականության մասով դեռևս առկա են խնդիրներ: Ըստ ԹԻՉԿ զեկույցի, եղել են դեպքեր, երբ բողոքների քննությանը մասնակցել են անձինք, որոնք լիազորված չէին այդ դերում: Ինչպես նկարագրվել է ԲԿԳ ԱՅՄ միջանկյալ ընթացիկ զեկույցում, բողոքարկման խորհրդի նիստերի հեռարձակումները շատ կարճ են և որոշ դեպքերում սահմանափակվում են խորհրդի որոշումների ընթերցումով՝ առանց համապատասխան մանրամասների տրամադրման: Հետևաբար, հիմնավոր մտահոգություններ կան, որ հանձնառությունն այն մասով, որը վերաբերում է որոշումների ընդունման եղանակին (այսինքն, թե ինչպես են ընդունվել որոշումները խորհրդի նիստի ընթացքում՝ ըստ գործողությունների ծրագրի), ենթակա է հետագա բարելավման:

## ՇԱՐՈՒՆԱԿԿԵՆ Է

Հանձնառությունը չի ընդգրկվել գործողությունների երրորդ ծրագրում:

## 6 | ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻԿՐՈՀԱՐՑՈՒՄՆԵՐ

### Հանձնառության ձևակերպումը

Համայնքի բնակիչները կարճ հաղորդագրությունների միջոցով ներգրավվում են տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների կայացման գործընթացում: Համայնքի բնակիչներին կարճ հաղորդագրության (SMS) միջոցով համայնքային խնդիրների վերաբերյալ մեկ կամ մի քանի հարց է ուղղվում՝ պատասխանների հնարավոր տարբերակներով: Քսանչորս ժամվա ընթացքում բնակիչները արձագանքում են հարցմանը՝ ուղարկելով պատասխան SMS, որտեղ նշում են պատասխանի իրենց նախընտրած տարբերակը:

Համայնքային միկրոհարցումը մատչելի և յուրօրինակ գործիք է, որը կնպաստի համայնքի բնակիչների և ՏԻՄ-երի միջև կապի ամրապնդմանը և որոշումների կայացման գործընթացի թափանցիկության ապահովմանը:

Պատասխանատու կառույց՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն

Աջակցող կազմակերպություններ՝ ՀՀ մարզպետարաններ, ՀՀ համայնքներ (համաձայնությամբ)

Սկիզբը՝ 2015թ. փետրվար

Ավարտը՝ 2016թ. դեկտեմբեր

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ	ԿՈՆԿՐԵՏՈՒԹՅՈՒՆ				ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԸԿԳ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ (ԸՍՏ ՁԱՎԵՐՊՄԱՆ)		ՊՈՏԵՆՑԻԱԼ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ		ԿԱՏԱՐՈՒՄԸ		ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԱՎԱՐ-ՏԻՆ		ԲԵՐԵՆ Է ԴԱ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ						
	Բացակայում է	Ցածր	Միջին	Բարձր	Տերեկավորության մատչելի	Հանրային մասնակց	Ռչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող	Չմեկնարկած	Որոշված	Զգալի	Ավարտված	Վատթարացել է	Չի փոխվ	Մարգինալ	Զգալի	Ավարտ
			X		X	X	X				X			X			X		

## ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Համայնքային միկրոհարցումների նպատակն է բարելավել համայնքի բնակիչների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև կապը և ապահովել տեղական մակարդակով ընդունված որոշումների թափանցիկությունը:

## ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

### Միջնաժամկետ՝ որոշակի

Միջանկյալ զեկույցի մշակման պահին տասը համայնքից չորսում միկրոհարցումներ են կազմակերպվել համայնքային այն խնդիրների վերաբերյալ, որոնք կարևորվել են տվյալ համայնքների ղեկավարների կողմից:

### Ավարտին՝ ավարտված

Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ) շարունակում է խթանել «Համայնքային միկրոհարցումներ» ծրագիրը Հայաստանի տարբեր համայնքներում<sup>1</sup>: Գործողությունների ծրագրի իրականացման ավարտին համայնքային միկրոհարցումներ են իրականացվել ինը համայնքում<sup>2</sup>, որոնցից մի քանիսը՝ ՄԱԶԾ ծրագրի շրջանակներում: Որոշ դեպքերում հարցման արդյունքները հասանելի էին SMS հարցման ծրագրի կայքում<sup>3</sup>, մյուս դեպքերում դրանք տեղադրվել են համայնքի ինտերնետային կայքում: Ըստ ՄԱԶԾ-ի՝ տեղական ինքնակառավարման մարմինները օգտագործում են նաև

<sup>1</sup> «Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային կառավարում», e-gov.am, 12 հունիսի 2017թ., <https://www.e-gov.am/>  
<sup>2</sup> ԹԻՉԿ 2015 և 2016թթ. պետական գնումների մոնիտորինգի հաշվետվություն, <http://bit.ly/2sVJ2GP>.

հաղորդակցության այլ ուղիներ (ինչպես, օրինակ, տեղական լրատվամիջոցները և հայտարարությունների տախտակները)՝ համայնքի անդամներին միկրոհարցումների արդյունքների վերաբերյալ տեղեկացնելու նպատակով:

## ԲԵՐԵՆ Է ԴԱ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

### Քաղաքացիական մասնակցություն՝ մարզինալ

Միկրոհարցումների ազդեցությունն ուսումնասիրելու արդյունքում ՄԱԶԾ-ն եկավ այն եզրակացության, որ տեղական ինքնակառավարման մարմինները որոշումներ ընդունելիս հաշվի են առել միկրոհարցումների արդյունքները: Միկրոհարցումների գործիքը ներկայումս ներդրվել է երեք խոշորացված համայնքներում, որոնք ընդգրկում են 17 բնակավայր (քաղաքներ ու գյուղեր): Այն հնարավորություն կտա բնակիչներին մասնակցել ինչպես խոշորացված համայնքների, այնպես էլ իրենց գյուղի կամ քաղաքի տեղական խնդիրներին վերաբերող հարցումներին:

ԶԳԿ որևէ ներկայացուցիչ չի մշտադիտարկել այս հանձնառության իրականացումը: Դժվար է հասկանալ, թե որքանով են միկրոհարցումները տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների կայացման գործընթացում ծառայել որպես տեղական համայնքի մասնակցության նշանակալի միջոց: ԶԳԿ-ները տեղյակ չեն, թե պիտոտային ծրագրի ավարտից հետո կառավարությունն այս ոլորտում ինչ նպատակներ ու մտադրություններ ունի:

## ՇԱՐՈՒՆԱԿԿԵՆ Է

Հանձնառությունը չի ընդգրկվել գործողությունների երրորդ ծրագրում:

# 7 | ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ և ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

### Հանձնառության ձևակերպումը

Անկախ հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ պետական գերատեսչությունների կառավարման գործընթացը երբեմն ֆորմալ բնույթ է կրում՝ բաց կառավարման հիմնարար արժեքների ընկալման և իրավակիրառական խնդիրների հետևանքով: Դա բերում է երկրի կառավարման և վերահսկողության նկատմամբ հանրային անվստահության և քաղաքացիական անտարբերության մթնոլորտի ձևավորմանը: Ուստի, արդիական է քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների գործընթացում քաղաքացիական հասարակության արդյունավետ, թափանցիկ և հաշվետու մասնակցային համակարգի ձևավորման խնդիրը:

ՀՀ կառավարության նիստի 2008թ. նոյեմբերի 20-ի թիվ 47 արձանագրային որոշմամբ հաստատված ՀՀ նախարարությունների կոլեգիաների/ խորհուրդների օրինակելի աշխատակարգում փոփոխությունների և լրացումների կատարում, որոնք՝

1. Կիստակեցնեն և կտարանջատեն կոլեգիաների և խորհուրդների գործառույթները, կճշգրտեն դրանցում մասնակից կողմերի կազմը, իրավունքներն ու պարտականությունները,
2. Կսահմանեն խորհուրդների ձևավորման և գործունեության բաց ու թափանցիկ ընթացակարգերը, ԶԳԿ-ների ներկայացուցչականության և մասնագիտական որակավորման չափորոշիչները,
3. ՀՀ կառավարության և նախարարությունների պաշտոնական կայքերում էլեկտրոնային հաշվետվողականության համակարգ կներդնեն՝ հանրության առաջարկները և դրանց վերաբերյալ պաշտոնական մեկնաբանությունները, մասնակցային և խորհրդակցական մարմինների գործունեության տարեկան հաշվետվությունները թափանցիկ և հասանելի դարձնելու համար:

Պատասխանատու կառույց՝ ՀՀ արդարադատության նախարարություն

Աջակցող կազմակերպություններ՝ չկան

Սկիզբը՝ 2014թ. օգոստոս

Ավարտը՝ 2015թ. օգոստոս

ՀԱՆՁՆԱԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ	ԿՈՆԿՐԵՏՈՒԹՅՈՒՆ				ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԿԳ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ (ԸՍՏ ԶԱՄԿԵՐՊՄԱՆ)				ՊՈՏԵՆՑԻԱԼ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ				ԿԱՏԱՐՈՒՄԸ		ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԱՎԱՐ-ՏԻՆ		ԲԵՐԵՆ Է ԴԱ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ					
	Բացակայում է	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելի	Հանրային մասնակց	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը՝ համուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող	Չմեկնարկած	Որոշակի	Զգալի	Ավարտված	Վատթարացել է	Չի փոխվ	Մարգինալ	Զգալի	Ավանտու	
		X				X			X						X					X		
																X						

## ՀԱՆՁՆԱԴՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Այս հանձնառությունը նպատակ ունի խթանել հանրային մասնակցությունը՝ պետական կառույցների խորհրդատվական մարմիններում ԶԳԿ-ների ներգրավման միջոցով: Կառավարությունը նպատակ է սահմանել քաղաքականության երկխոսության

<sup>1</sup> 2016թ. ապրիլի 28-ին Սյունիքի մարզի Շինուհայր համայնքում ՄԱԶԾ ծրագրի համակարգող Նատալյա Հարությունյանը ներկայացրեց «Համայնքային միկրոհարցումներ» ծրագիրը: Մանրամասները՝ <http://bit.ly/2f7hPn> հղումով  
<sup>2</sup> Այդ ինը համայնքներն են՝ Աշտարակ համայնքը Արագածոտնի մարզում, Գորիս համայնքը Սյունիքի մարզում, Գյումրի և Արեգնադեմ համայնքները Շիրակի մարզում, Եղվարդ, Բյուրեղավան, Բասախ, Զրվեժ և Արզական համայնքները Կոտայքի մարզում  
<sup>3</sup> Համայնքային միկրոհարցումների արդյունքները հասանելի են <http://smspolling.org/> կայքում

գործընթացում ՔՀԿ-ների ներգրավման թափանցիկ մեխանիզմ ստեղծել՝ Հայաստանում կառավարման և վերահսկողության համակարգի նկատմամբ անվստահության և քաղաքացիական անտարբերության խնդիրները հասցեագրելու համար

## ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

### Միջնաժամկետ՝ զգալի

2015թ. հուլիսին ՀՀ արդարադատության նախարարությունը ներկայացրեց հասարակական խորհուրդների աշխատակարգի նախագիծ: Քաղաքացիական հասարակությանը կոչ արվեց առաջարկներ ներկայացնել նախագծի վերաբերյալ:

### Ավարտին՝ ավարտված

«Արագ» և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ների ներկայացուցիչներն ակտիվորեն մասնակցել են որոշման նախագծի շուրջ քննարկումներին: 2015թ. նոյեմբերի 26-ին ընդունվեց յուրաքանչյուր նախարարին կից գործառնող հասարակական խորհուրդների աշխատակարգը:

2016թ. դեկտեմբերի դրությամբ մի քանի նախարարություններում հասարակական խորհուրդներն արդեն ձևավորվել էին՝ մինչդեռ մյուսները ձևավորման ընթացքում են: Ըստ «Արագ» ՀԿ-ի մոնիտորինգի արդյունքների, 2016թ. նոյեմբերի ավարտին 18 նախարարություններից 13-ում հասարակական խորհուրդներն արդեն ձևավորվել էին, մեկ նախարարությունում խորհուրդը ձևավորման փուլում էր, մեկում այն չէր ձևավորվել ՀԿ-ների դիմումների անբավարար քանակի պատճառով, իսկ երեքում հասարակական խորհուրդներ չէին ստեղծվել: «Արագան» ընդգծում է նաև, որ նախարարությունների կայքերում դժվար է տեղեկատվություն գտնել հասարակական խորհուրդների կամ դրանց նիստերի արձանագրությունների վերաբերյալ

## ԲԵՐԵՂ Է ԴԱ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

### Քաղաքացիական մասնակցություն՝ մարզինալ

Կառավարությունը հասարակական խորհուրդների ձևավորումը դիտարկում է որպես քաղաքականության մշակման և քննարկման գործընթացում ՔՀԿ-ների ներգրավման արդյունավետ գործիք: «Արագ» ՀԿ-ն, որն այս հանձնառության կատարման շուրջ համագործակցել է կառավարության հետ, առկա զարգացումը նշանակալի է համարում, իսկ Արդարադատության նախարարությանը՝ համագործակցող: Ըստ «Արագայի», ակնհայտ է առանձին նախարարությունների դիրքորոշման փոփոխությունը, որը նկատելի էր ԲԿԳ գործողությունների երրորդ ծրագրի նախագծի մշակման աշխատանքների ընթացքում: «Արագան» նշում է նաև, որ հասարակական խորհուրդների ստեղծումը ՔՀԿ-ների հանդեպ նոր ակնկալիքներ է ձևավորում՝ կառուցողական քննարկումներում իրենց ներգրավման կարողությունները հզորացնելու միջոցով:

Այնուամենայնիվ, «Արագան» նաև որոշակի խնդիրներ է նշում՝ կապված այս հանձնառության իրականացման հետ: Մասնավորապես, նշվում է, որ կառավարությունը հանրային իրազեկման արշավ չի իրականացրել: ՔՀԿ-ների հետաքրքրվածության պակասը բնորոշվում էր վստահության և մոտիվացիայի պակասով, որը պայմանավորված էր այն համոզմունքով, որ հասարակական խորհուրդը ձևական բնույթ է ունենալու և հետևաբար ՔՀԿ-ների ազդեցությունը որոշումների կայացման գործընթացում շատ փոքր կլինի: ՔՀԿ-ների դերերի հստակության պակասը մեկ այլ մարտահրավեր է, որ խանգարում է այս հանձնառության լիարժեք իրականացմանը

## ՇԱՐՈՒՆԱԿՎԵՂ Է

Հանձնառությունը չի ընդգրկվել գործողությունների երրորդ ծրագրում:

# 8 | ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՕՐԻՆԱՄՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ

### Հանձնառության ձևակերպումը

ՀՀ գերատեսչությունների կողմից մշակվում են իրավական ակտերի նախագծեր, որոնց վերաբերյալ հանրությունը երբեմն բավարար տեղեկացված չէ: Արդյունքում հանրությունը հնարավորություն չի ունենում ծանոթանալ ընդունվող նախագծերին մինչև դրանց ընդունումը, առաջարկություններ ներկայացնել պատասխանատու գերատեսչություններին և ներդրում ունենալ դրանց լրամշակման գործում:

4. Կստեղծվի պետական կառավարման մարմինների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական առցանց հարթակ՝ գերատեսչությունների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի մասին հանրությանը իրազեկելու նպատակով (այդ թվում՝ բաժանորդագրման սկզբունքով): Քաղաքացիական հասարակությանը հնարավորություն կընձեռվի առաջարկություններ ներկայացնել նախագծերի վերաբերյալ և տեղեկանալ դրանց կարգավիճակի մասին (ընդունվել է, թե ոչ, ինչպես է խմբագրվել, չընդունելու հիմնավորումները):

Պատասխանատու կառույց՝ ՀՀ արդարադատության նախարարություն

Աջակցող կազմակերպություններ՝ չկան

Սկիզբը՝ 2014թ. օգոստոս

Ավարտը՝ 2016թ. դեկտեմբեր

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ	ԿՈՆԿՐԵՏՈՒԹՅՈՒՆ				ՀԱՄԱՊԱՏԱՍԻՄ-ՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԿԳ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ (ԸՆՏ ՁԱՆԿԵՐՊՄԱՆ)				ՊՈՏԵՆՑԻԱԼ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ				ԿԱՏԱ-ՐՈՒՄԸ		ՄԻՋՆԱ-ԺԱՄԿԵՏ ԱՎԱՐ-ՏԻՆ		ԲԵՐԵՂ Է ԴԱ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ					
	Բացակայում է	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելի	Հանրային մասնակց	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիաներ և նորարարությունը՝ համուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող	Չմեկնարկած	Որոշակի	Զգալի	Ավարտված	Վատթյալացել է	Չի փոխվ	Մտրգիճալ	Զգալի	Ավանտու	
			X	X					X				X								X	
															X							

## ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Այս հանձնառության նպատակն է՝ ստեղծել պետական մարմինների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման առցանց հարթակ: Նոր կայքը օգտատերերին հնարավորություն կտա ծանոթանալ շտեմարանում առկա նախագծերին և գրանցել դրանց վերաբերյալ իրենց մեկնաբանություններն ու առաջարկությունները:

<sup>1</sup>Որպես օրինակ՝ տե՛ս հետևյալ նախարարությունների կողմից ստեղծված հասարակական խորհուրդների մասին տեղեկատվությունը՝ ՀՀ առողջապահության նախարարություն՝ <http://bit.ly/2smEXyk>, ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝ <http://bit.ly/2sW9ekq>, ՀՀ մշակույթի նախարարություն՝ <http://bit.ly/2rcw4mS>, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ <http://bit.ly/2smHCrv>:



## ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

### Միջնաժամկետ` որոշակի

Միջանկյալ գեկույցը գրելու պահին նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման առջանց հարթակը հասանելի չէր: Արդարադատության նախարարությունը Համաշխարհային բանկի հետ բանակցում էր առջանց հարթակի ստեղծման նպատակով ֆինանսական օժանդակության տրամադրման շուրջ:

### Ավարտին` զգալի

Կառավարությունը փոփոխություն մտցրեց 2010թ. թիվ 296 որոշման մեջ, որը վերաբերում էր նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումներին: Նախագիծը մշակող մարմինն իր ինտերնետային կայքում և ՀՀ արդարադատության նախարարության կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում պետք է հրապարակի հանրային քննարկումների հրավեր: Հրավերը կարող է պարունակել տեղեկություններ քննարկումների իրականացման վայրի, ժամի, ժամկետների, քննարկման թեմայի և տեսակի, ինչպես նաև հանրային քննարկմանը մասնակցելու համար շահագրգիռ անձանց կողմից ներկայացվող դիմումների ընդունման վերջնաժամկետի մասին: Այս հանձնառության իրականացման շրջանակներում Արդարադատության նախարարությունը ակտիվորեն համագործակցում էր «Արագ» ՀԿ-ի հետ:

Սույն գեկույցի մշակման պահին (2017թ. հունվար) կայքն առկա էր փորձնական ռեժիմում : Ի սկզբանե կառավարությունը նախատեսում էր կայքի շնորհանդեսը իրականացնել 2016թ. դեկտեմբերի 1-ին, սակայն հետագայում հետաձգեց մեկնարկի ժամկետը: 2016թ. դեկտեմբերի 28-ին Արդարադատության նախարարությունը e-draft.am կայքի գործնական օգտագործման վերաբերյալ դասընթաց կազմակերպեց տարբեր պետական մարմինների պաշտոնյաների համար2: Կայքը փորձարկվեց բոլոր նախարարությունների կողմից3: Ըստ Արդարադատության նախարարության, կայքը գործում էր 2017թ. հունվարի 24-ին (գործողությունների ծրագրի վերջնաժամկետից ուշ), երբ դասընթաց կազմակերպվեց հարթակի մեկնարկի և նախագծերի հրապարակման համար դրա կիրառման վերաբերյալ4: Երկու դասընթացներին մասնակցեցին 18 նախարարությունների, 8 գերատեսչությունների և ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցներ:

## ԲԵՐԵՆ Է ԴԱ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

### Տեղեկատվության մատչելիություն` չի փոխվել

Հայաստանյան հասարակությունը և ԹՀԿ հանրությունը բավականաչափ տեղեկացված չեն եղել տարբեր նախարարությունների ու գերատեսչությունների կողմից մշակված իրավական ակտերի մասին, ոչ էլ նկատառումներ կամ առաջարկներ ներկայացնելու հնարավորություն են ունեցել: Առջանց հարթակը նպատակ ուներ ծառայել որպես իրավական ակտերի նախագծերի հրապարակման միջոց: Քանի որ առջանց հարթակը դեռևս չի գործում, տեղեկատվության հասանելիության բարելավման առումով որևէ փոփոխություն չի արձանագրվել:

Կառավարության թիվ 296 որոշումը, որը կանոնակարգում է հանրային քննարկումների գործընթացը, վերաբերում է «իրավական ակտերի» նախագծերին: Հարկ է տեսնել, թե արդյոք հարթակը կօգտագործվի բոլոր նորմատիվ իրավական ակտերի, թե միայն դրանցից մի քանիսի հանրային քննարկման համար:

## ՇԱՐՈՒՆԱԿՎԵՆ Է

Հանձնառությունը չի ընդգրկվել գործողությունների երրորդ ծրագրում:

# 9 | ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ և ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

### Հանձնառության ձևակերպումը

ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների (ՊՈԱԿ-ների) կառավարման խորհուրդների ներկայացուցչական բնույթը երբեմն խախտվում է, քանի որ լինում են դեպքեր, երբ կառավարման խորհրդում ընտրվում է ծնող, որը միաժամանակ տվյալ հաստատության մանկավարժ է: Նման դեպքում ծնողը չի կարող լինել անաչառ, քանի որ նա, լինելով նաև մանկավարժ, աշխատում է տվյալ հաստատության տնօրենի ղեկավարության ներքո: Այդ դեպքում կառավարման խորհուրդը չի կարող արդյունավետ գործել` անդամների միջև գոյություն ունեցող ուղղահայաց և հորիզոնական կապերի պատճառով:

ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատության կառավարման խորհուրդների ճիշտ համամասնությունն ապահովելու համար կառավարման խորհրդի ընտրության կարգում կկատարվի լրացում, համաձայն որի խորհրդի կազմում ծնողական համայնքից չեն առաջադրվի այն անձինք, ովքեր ընդգրկված են տվյալ դպրոցի մանկավարժական կազմում:

ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման ու իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը հաճախ հասանելի չէ այն անձանց, ովքեր օգտվում են հանրակրթական ուսումնական հաստատությունների կրթական ծառայություններից: Դա բացասական ազդեցություն է թողնում վստահության մթնոլորտի և ծնող-դպրոց համագործակցության արդյունավետության վրա:

ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատության կառավարման խորհրդի ընտրության կարգում փոփոխությունների կատարում,

Հանրակրթական ծառայությունների բյուջեի պլանավորման (տարեկան բյուջեի նախագծի) և տարեկան ֆինանսական ծախսերի թափանցիկության և հաշվետվողականության ապահովում` հանրակրթական դպրոցների ինտերնետային կայքերում և հաստատությունների հայտարարությունների անկյուններում դրանց տեղադրման միջոցով:

Աջակցող կազմակերպություններ` չկան

Սկիզբը` 2014թ. օգոստոս

Ավարտը` 2015թ. մարտ

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ	ԿՈՆԿՐԵՏՈՒԹՅՈՒՆ				ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԿԳ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ (ԸՍՏ ԶԱՎԵՐՊՄԱՆ)			ՊՈՏԵՆՑԻԱԼ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ		ԿԱՍԱ-ՐՈՒՄԸ		ՄԻՋՆԱ-ԺԱՄԿԵՏ ԱՎԱՐ-ՏԻՆ		ԲԵՐԵՆ Է ԴԱ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ								
	Բացակայում է	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելի	Հանրային մասնակցի	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը` հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող	Չմեկնարկած	Որոշակի	Զգալի	Ավարտված	Վատթարացել է	Զի փոխի	Մարգինալ	Զգալի	Ավարտ	
			X			X	X		X						X				X			
															X							

## ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Այս հանձնառությունը նպատակ ունի բարելավելու դպրոցների կառավարման խորհուրդների ընտրության և դպրոցների բյուջեի պլանավորման գործընթացի թափանցիկությունը:

## ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

### Միջնաժամկետ՝ ավարտված

Միջանկյալ զեկույցը գրելու պահին ՀՀ կրթության և գիտության նախարարությունը (ԿԳՆ) թողարկել էր մի հրաման, որի նպատակն էր կարգավորել դպրոցների տարեկան բյուջեի պլանավորման փորձնական գործընթացը և բյուջեի կատարման զեկույցի ներկայացումը: Ինչպես նշվել է միջանկյալ զեկույցում, ԿԳՆ-ն աշխատանքային խում<sup>1</sup> է ձևավորել հանձնառության կատարումն ապահովելու համար: Աշխատանքային խումբը հանդիպումներ է ունեցել սկզբում, որոնց ընթացքում խմբի անդամները ներկայացրել են խնդրի լուծման վերաբերյալ իրենց տեսլականը և որոշել են, թե ինչպես պետք է կազմակերպել աշխատանքը: Աշխատանքային խումբը նիստերի արձանագրություններ չի վարել: Կարծիքները և նախագծերը փոխանցվել են էլեկտրոնային փոստով: Քննարկումների և խորհրդակցությունների արդյունքում ԿԳՆ-ն երկու փաստաթուղթ հաստատեց: Առաջին փաստաթղթով փոփոխություններ են կատարվել դպրոցների կառավարման խորհուրդների ձևավորման կարգում<sup>2</sup>, իսկ երկրորդով հաստատվել է դպրոցի տարեկան բյուջեի պլանավորման և տարեկան բյուջեի կատարման հաշվետվության ներկայացման կարգը:

## ԲԵՐԵՂ Է ԴԱ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

### Քաղաքացիական մասնակցություն՝ մարզինալ Հանրության առջև հաշվետվողականություն՝ չի փոխվել

Հայաստանի դպրոցների կառավարման խորհուրդները միշտ չէ, որ ներկայացուցչական են, իսկ տարեկան բյուջեների պլանավորման և իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը հաճախ բացակայում է: Կառավարությունը նպատակ դրեց բարելավել դպրոցների կառավարման խորհուրդների ընտրության կարգը և ապահովել նրանց ֆինանսական կառավարման թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Ընտրության կարգի բարելավումը կընդլայնի դպրոցների կառավարման գործում հանրային մասնակցության հնարավորությունները՝ թույլ չտալով, որ տվյալ դպրոցում սովորող երեխաներ ունեցող ուսուցիչները կառավարման խորհրդում ներկայացնեն ծնողներին: Այսպիսով, դպրոցում չաշխատող ծնողները մասնակցության ավելի շատ հնարավորություններ կունենան:

Հանձնառության առաջին մասը վերաբերում է հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեների պլանավորմանը և կատարմանը: ԿԳՆ որոշմամբ սահմանվել է դպրոցի տարեկան բյուջեի պլանավորման և տարեկան բյուջեի կատարման հաշվետվության ներկայացման կարգը: Հանձնառության երկրորդ մասը վերաբերում է դպրոցական խորհուրդների ձևավորմանը: Դպրոցների կառավարման խորհուրդների ձևավորման գործընթացը կանոնակարգվում է ԿԳՆ հրամանով<sup>3</sup>: Խորհուրդը պետք է կազմված լինի 8 անդամից, որոնք ներկայացնում են ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, մարզպետին<sup>4</sup> կամ Երևանի քաղաքապետին, մանկավարժական և ծնողական խորհուրդները: Կառավարման խորհրդի 8 անդամներից 6-ին նշանակում են պետական մարմիններն ու դպրոցի ղեկավարությունը (որն իր հերթին նշանակվում է պետական մարմնի կողմից): ԶՀԿ-ները կարծում են, որ կառավարման խորհրդի կազմի ձևավորման ներկա մեխանիզմը չի նպաստում դպրոցների խորհուրդների կողմից անաչառ կառավարմանը: Վերանայված դրույթների համաձայն՝ դպրոցի ուսուցիչները (որոնք ըստ ԶՀԿ-ների վերահսկվում են դպրոցի ղեկավարության կողմից) չեն կարող հանդես գալ խորհրդում որպես ծնողների ներկայացուցիչ, նույնիսկ եթե նրանց երեխաները սովորում են տվյալ դպրոցում:

Ըստ Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի (ԲՀՀ), այս հանձնառության ներքո ԿԳՆ կողմից նախաձեռնված փոփոխությունները բավականաչափ ազդեցություն չեն ունեցել: Խորհուրդների ընտրությունը կանոնակարգող փաստաթուղթը չի անդրադառնում որոշ կարևոր հարցերի, որոնցից մեկը համամասնության խնդիրն է: Մյուս կողմից, տարեկան բյուջեի պլանավորման ու ծախսերի հաշվետվության ընթացակարգը կանոնակարգող փաստաթուղթը փորձարկման փուլում էր մինչև 2015-2016 ուսումնական տարվա ավարտը:

Փորձարկման ավարտից և արդյունքների ամփոփման գործընթացից հետո այս փաստաթուղթը պետք է պաշտոնական գրանցման ընթացակարգ անցնի Արդարադատության նախարարությունում՝ դպրոցների համար նորմատիվ փաստաթուղթ դառնալու համար: Ըստ ԲՀՀ-ի, ԿԳՆ-ն չի տիրապետում կանոնակարգի իրականացման արդյունավետության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությանը:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի (ԻԱԿ) կարծիքով, ԶՀԿ համայնքը տեղյակ չէ ոչ կարգավորումների փոփոխության ազդեցության, ոչ էլ դպրոցների կողմից ձեռնարկված գործողությունների մասին: Կարգավորումների փաստացի իրականացման և պարտադրման համար ժամանակ է պետք, ինչպես նաև մշտադիտարկում ԿԳՆ ու ԶՀԿ համայնքի կողմից: ԿԳՆ-ն կառավարությանն առաջարկել է դպրոցների տարեկան բյուջեի պլանավորման ու ծախսերի հաշվետվության կարգը ներառել «ՀՀ հանրակրթական հաստատությունների» օրինակելի կանոնադրության մեջ:

## ՇԱՐՈՒՆԱԿՎԵՂ Է

Հանձնառությունը չի ընդգրկվել գործողությունների երրորդ ծրագրում: Կառավարման և ծախսերի թափանցիկության բարելավման համար դպրոցները կարող են կանոնավոր կերպով հրապարակել իրենց ֆինանսական հաշվետվությունները:

<sup>1</sup> ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015թ. մարտի 30-ի թիվ 205-Ս/Ք հրամանով հաստատվեց հանրակրթական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և տարեկան բյուջեի կատարման հաշվետվության ներկայացման կարգը:

<sup>2</sup> ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015թ. փետրվարի 24-ի թիվ 102-Ն հրամանով լրացումներ և փոփոխություններ կատարվեցին ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանում:

<sup>3</sup> ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատվեց ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունե պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը:

<sup>4</sup> Մարզպետները նշանակվում են ՀՀ կառավարության կողմից

# 10 | ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ և ՀԱԿԱԿՈՒՌՈՒՊՑԻՈՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

## Հանձնառության ձևակերպումը

Ներկայումս պետական ծառայողներից շատերը կոռուպցիայի դեմ պայքարի և տեղեկատվության ազատության ոլորտում բավարար գիտելիքներ և հմտություններ չունեն բաց և թափանցիկ գործելու համար: Հանձնառությունը կօգնի լրացնել տեղեկատվության և գիտելիքի պակասը պաշտոնյաների մոտ:

Կբարելավվեն 200 հանրային ծառայողների գիտելիքները կոռուպցիայի դեմ պայքարի, ազնվության և տեղեկատվության ազատության ոլորտում, ինչպես նաև նրանց հմտությունները տեղեկատվության ազատության օրենսդրության կիրառման ոլորտում: Դասընթացները կօգնեն հանրային ծառայողներին բաց և թափանցիկ աշխատել՝ առաջնորդվելով հանրային ծառայողի էթիկայի կանոններով:

Պատասխանատու կառույց՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն

Աջակցող կազմակերպություններ՝ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ

Սկիզբը՝ 2014թ. օգոստոս

Ավարտը՝ 2016թ. դեկտեմբեր

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ	ԿՈՆԿՐԵՏՈՒԹՅՈՒՆ				ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԿԳ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ (ԸՍՏ ՁԱԿԵՐՊՄԱՆ)				ՊՈՏԵՆՑԻԱԼ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ				ԿԱՏԱՐՈՒՄԸ		ՄԻՋՆԱԺԱՄԿԵՑ ԱՎԱՐՏԻՆ		ԲԵՐԵՆ Է ԴԱ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ					
	Բացակայում է	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելի	Հանրային մասնակց	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեղեկագրի և նորարարությունը՝ հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չավանդ	Փոխանակարող	Չմեկնարկած	Որոշակի	Չգալի	Ավարտված	Վատթարացել է	Չի փոխվ	Մարգինալ	Չգալի	Ավանտ:	
			X		Հստակ չէ					X				X				X				

## ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Հանձնառության նպատակն է հանրային ծառայողների համար ուսուցում կազմակերպել տեղեկատվության ազատության և կոռուպցիայի դեմ պայքարի թեմայով:

## ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

### Միջնաժամկետ՝ որոշակի

2014թ. ապրիլին ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը, համագործակցելով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» (ԻԱԿ) ՀԿ-ի հետ, քաղաքացիական ծառայողների համար սկսել է «Տեղեկատվության ազատություն և պետական կառավարման ոլորտում հանրային կապերի բարելավում» թեմայով դասընթացների կազմակերպումը:

## Ավարտին՝ զգալի

Սույն զեկույցի մշակման պահին ԻԱԿ-ը տեղեկատվության ազատության թեմաներով հատուկ դասընթացներ էր իրականացրել 60 քաղաքացիական ծառայողների համար: Տարածքային կառավարման նախարարությունը կանոնավոր դասընթացներ է կազմակերպում համայնքային ծառայողների համար: Այլ թեմաների շարքում ժամանակ է հատկացվում նաև կոռուպցիայի (8 ժամ) և տեղեկատվության ազատության (2 ժամ) թեմաներով դասընթացների համար: Ըստ կառավարության՝ 2014-2015թթ. ընթացքում ավելի քան 3700 համայնքային ծառայողներ, համայնքի ղեկավարներ և ավագանու անդամներ, ինչպես նաև մարզպետարանի աշխատողներ մասնակցել են ընդհանուր դասընթացներին: Այս դասընթացներն ավելի ընդհանուր բնույթ են կրում և միայն մասամբ են ներառում տվյալ հանձնառության մեջ նշված թեմաները՝ տեղեկատվության ազատությունը և կոռուպցիայի դեմ պայքարը: ԶՀԿ ներկայացուցիչները չեն ընդգրկվել այս հանձնառության մոնիտորինգի գործընթացում՝ քաղաքացիական/համայնքային ծառայողների ընդհանուր դասընթացների մասով:

## ԲԵՐԵՆ Է ԴԱ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

### Տեղեկատվության մատչելիություն՝ չի փոխվել Քաղաքացիական մասնակցություն՝ չի փոխվել Հանրության առջև հաշվետվողականություն՝ չի փոխվել

ՀՀ կառավարությունն ընդունում է այն փաստը, որ բազմաթիվ քաղաքացիական ծառայողներ բավարար գիտելիքներ և հմտություններ չունեն կոռուպցիայի դեմ պայքարի և տեղեկատվության ազատության ոլորտներում: Այս հանձնառության նպատակն էր լրացնել այդ բացը: Այնուամենայնիվ, չկա հանրայնորեն հասանելի որևէ ապացույց, որը ցույց կտար, թե ինչ է փոխվել նշված դասընթացների արդյունքում: Պարզ չէ նաև, թե արդյոք դասընթացների հարցաթերթերը պատշաճ կերպ լրացվել ու վերլուծության են ենթարկվել՝ հետագա դասընթացները համապատասխանաբար վերանայելու համար:

## ՇԱՐՈՒՆԱԿՎԵՆ Է

Հանձնառությունը չի ընդգրկվել գործողությունների երրորդ ծրագրում:

# 11 | ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

## Հանձնառության ձևակերպումը

Հայաստանի խոշոր համայնքների մի մասը ունեն ինտերնետային կայքեր, մյուսները՝ ոչ, դրանք թարմացվում են խիստ անկանոն, ոչ բոլոր կայքերում են հրապարակվում ՏԻՄ որոշումները (ավագանու որոշումները, համայնքապետի հրամաններ ու կարգադրությունները) կամ դրանք հրապարակվում են մասնակիորեն: Հանրային քննարկումների, լսումների, ավագանու նիստերի մասին բավարար իրազեկում չի իրականացվում: Ավագանու նիստերն առցանց հեռարձակվում են միայն Գյումրի և Վանաձոր քաղաքներում, իսկ որոշ համայնքներում դահլիճների բավարար տարածքի բացակայության հետևանքով երբեմն հնարավոր չի լինում ապահովել բոլոր հետաքրքրված անձանց մասնակցությունն ավագանու նիստերին:

Հայաստանի 20000 և ավել բնակչություն ունեցող համայնքների համար կապահովվի ինտերնետային կայքերի ստեղծումը, թարմացումը, համայնքային իշխանության կողմից ընդունված բոլոր իրավական ակտերի հրապարակումը, ավագանու նիստերի, հանրային քննարկումների և լսումների վերաբերյալ ծանուցումը և ավագանու նիստերի առցանց հեռարձակումը

Պատասխանատու կառույց՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն

Աջակցող կազմակերպություններ՝ ՀՀ մարզպետարաններ (տարածքային կառավարման մարմիններ)

Սկիզբը՝ 2014թ. օգոստոս

Ավարտը՝ 2016թ. ապրիլ

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ	ԿՈՆԿՐԵՏՈՒԹՅՈՒՆ				ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԿԳ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ (ԸՍՏ ՁևԱԿԵՐՊՄԱՆ)				ՊՈՏԵՆՑԻԱԼ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ				ԿԱՏԱՐՈՒՄԸ		ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԱՎԱՐՏԻՆ		ԲԵՐԵՂ Է ԴԱ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ					
	Բացավորում է	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելի	Հանրային մասնակց	Համայնքային առջև հաշվետվողականություն	Տեղեկագրի և նորարարությունը՝ համուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող	Չմեկնարկված	Որոշակի	Զգալի	Ավարտված	Վատթարացել է	Չի փոխվել	Մարգինալ	Զգալի	Ավանտ	
			X		X						X			X				X				

## ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Այս հանձնառության նպատակն է բարելավել հանրային քննարկումների ու համայնքների ավագանիների լսումների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը՝ ինտերնետային կայքեր ստեղծելու, թարմացնելու և համայնքների նիստերն առցանց հեռարձակելու միջոցով:

## ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

### Միջնաժամկետ՝ որոշակի

Միջանկյալ զեկույցի մշակման պահին համայնքների մեծ մասը ձեռք չէր բերել առցանց հեռարձակման համար անհրաժեշտ սարքավորումները (տեսախցիկներ, խոսափողներ, այլ սարքեր): Տասնյոթ համայնքից միայն չորսն էր հեռարձակում ավագանիների նիստերը, որոնցից մեկը՝ ոչ կանոնավոր:

## Ավարտին՝ որոշակի

Ըստ ինքնագնահատման զեկույցի, 2016թ. հունիսին տասնյոթ համայնքներ արդեն ստացել էին սարքավորումների մի մասը՝ իրենց նիստերը հեռարձակելու համար: Զեկույցում չի նշված, թե քանի կայք է ստեղծվել և թե արդյոք ավագանիների որոշումները հասանելի են դարձել:

2016 թ. դեկտեմբերի դրությամբ Բաց հասարակության հիմնադրամների կողմից ֆինանսավորվող «Քաղաքացիական երիտասարդական կենտրոններ» ծրագրի շրջանակներում Հայաստանի ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը ուսումնասիրել է տեղական ինքնակառավարման 17 մարմինների գործունեության թափանցիկությունը՝ որպես չափանիշ դիտարկելով ավագանու նիստերին քաղաքացիների ներկա լինելու կամ հաղորդակցության այլ միջոցներով տեղեկատվություն ստանալու հնարավորությունները:

Ըստ մոնիտորինգի արդյունքների՝ յոթ համայնք, մասնավորապես՝ Երևանը, Գյումրին, Էջմիածինը, Կապանը, Հրազդանը, Արարատը և Գավառը, հեռարձակում էին ավագանու նիստերը: Թվարկված համայնքներից Արարատը միայն մեկ նիստ էր հեռարձակել:

Որպես խնդիր նշվում է նախատեսվող ուղիղ հեռարձակումների վերաբերյալ ծանուցումների բացակայությունը: Մոնիտորինգի հաշվետվության եզրակացության մեջ նշվում է, որ մի շարք ՏԻՄ-երի ղեկավարներ ավագանու մոտակա նիստերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն (ժամ, օր, նախնական օրակարգ) չեն տրամադրել, որն անհնար է դարձնում դիտումները և անիմաստ՝ հեռարձակումների կազմակերպումը

## ԲԵՐԵՂ Է ԴԱ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

### Տեղեկատվության մատչելիություն՝ չի փոխվել

Հանրությունը պատշաճ կերպով չի տեղեկացվում ավագանու նիստերի, քննարկումների և լսումների մասին: Որոշ համայնքներում հնարավոր չէ ապահովել շահագրգիռ կողմերի մասնակցությունը՝ համապատասխան տարածքի բացակայության պատճառով: Համայնքի ավագանու նիստերի առցանց հեռարձակումը կարող է մասամբ լուծել այս խնդիրը: Սակայն սույն զեկույցի մշակման պահին առկա տեղեկատվության համաձայն՝ որևէ նոր համայնք չի սկսել նիստերի առցանց հեռարձակում իրականացնել

## ՇԱՐՈՒՆԱԿՎԵՂ Է

Հանձնառությունը չի ընդգրկվել գործողությունների երրորդ ծրագրում:



### ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հանձնառությունները խմբավորվել են ԲԿԳ գործողությունների ծրագրի հիման վրա: Սույն զեկույցը կազմվել է պետական ծրագրերի, օրենքների ու կարգավորումների նախագծերի, կառավարության որոշումների, կառավարության ինքնազնահատման զեկույցի ուսումնասիրության, հանձնառությունների վերլուծության, [www.ogp.am](http://www.ogp.am) կայքում տեղադրված տեղեկատվության, ԲԿԳ աշխատանքային խմբի հանդիպումների արձանագրությունների և գործողությունների երկրորդ ծրագրի մշակման գործընթացի մոնիտորինգի արդյունքների հիման վրա:

ԱՅՄ հետազոտողը հանդիպում և քննարկումներ է ունեցել ՀՀ կառավարության պատասխանատու անձի՝ Արամ Ասատրյանի հետ: Բացի այդ, ԱՅՄ հետազոտողը հանդիպումներ, հեռախոսազրույցներ և նամակագրություն է ունեցել կառավարության աշխատակիցների, ԲԿԳ հանձնառությունների իրականացման ու մոնիտորինգի գործում առավել ակտիվ ԶՀԿ ներկայացուցիչների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:



Արտակ Զյուրումյանը պետական կառավարման ոլորտում փորձառություն ունեցող հետազոտող է: Նա աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարությունում: Նա ճարտարագիտության մագիստրոսի կոչում է ստացել Չայաստանի ամերիկյան համալսարանից (1995) և բիզնես կառավարման մագիստրոսի կոչում՝ Թուլեյնի համալսարանից (2003):



Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) նպատակն է նախաձեռնությանը միացած երկրների կառավարությունների կողմից կոնկրետ հանձնառությունների ստանձնումը՝ թափանցիկության խթանման, հանրային մասնակցության ապահովման, կոռուպցիայի դեմ պայքարի և կառավարումը բարելավելու նպատակով նոր տեխնոլոգիաների օգտագործման ուղղությամբ: ԲԿԳ անկախ հաշվետվական մեխանիզմը (ԱՅՄ) իրականացնում է .



Independent Reporting Mechanism  
Open Government Partnership  
c/o OpenGovHub  
1110 Vermont Ave NW Suite 500  
Washington, DC 20005

Open  
Government  
Partnership

INDEPENDENT  
REPORTING MECHANISM